



5762




1910



Վ Ա Ր Գ Ա Ն

Ետքուն ինդիական իրա



Ելեկուն կազմակերպություն

ՍՊԱՐԱՊԵՏ

Կազմեց ՔԱՐԱԿԵԼՈՅ Ա.

Գիշե է 30 դիզ.

ԹԻՖԼԻՍԻ ԴՐԱԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԿԱՆ ՎԱՃԱՌԻՒՄ ԵՎ
ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Խոխ Խաչիկ, բ. տպ.	.	.	25	4
2.	Քաջ Աղասի, Միքելի հերոս,	.	.	25	
3.	Սասունցի Յովան	.	.	30	
4.	Աղգային պատկներ	.	.	25	
5.	«Միրտ» գրքից, պատկերազարդ	.	.	40	
6.	Ժամանակը ոսկի, պատկերազարդ	.	.	40	
7.	Գալօ ափօ, բ. տպ.	.	.	12	
8.	Երկու զրոյց	ա.	Երեք խոստովանութիւն	25	
		բ.	Երեք ոսկու պատմութիւն		
9.	Երկու աղբէրացեղ, բ. տպ.	.	.	30	
10.	Շէս թագաւորի աղջիկ, բ. տպ.	.	.	25	
11.	Աստուած աղքատի կերպում	.	.	20	5
12.	Հերիաթներ	.	.	30	5
13.	Աստուած չըճանաչող	.	.	10	5
14.	Անմեռ աշխարհ	.	.	8	5
15.	Երկասիրութիւններ	.	.	50	
16.	Փոքրոզի բարեկամներ	.	.	15	
17.	Կրօնի դասաւութիւնը Ա. բաժանմունքում.	40			
18.	Ծովինար, գ. տպ.	.	.	25	
19.	Վարդանանց և Ղեղնղեանց մասին, զրոյց պատկերներով	.	.	30	

Հեղինակի հասցէն՝ Թիֆլիս. Միքայէլեան փողո
№ 82. բն. 9.

9(47.925)

ա6 թ-17

ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԷՒ

ՂԵՂՈՆԴԵԱՆՑ

Մ Ա Ս Ի Ն

(զրոյց հայ ժողովրդի համար)

Կազմեց ՔԱՄԱԼԵԱՆՑ Ա.

Գինն է ՅՈՂ.



ՏՓԽԻՄ
Տպարան «Եպօֆս» Գանովվայրա № 3.
1910

38529-Ա.հ

Մեմորա ԵՐԵՑԻ ԶՐՈՅՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՒ ՂԵԽՈՆ-
ԴԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Զմեռն էր ու գիւղի եկեղեցին ցուրտ, ժո-
ղովուրդ չէր գալիս, որ Մխիթար երէցը քարո-
ղի, ստիպուած ինքն էր զնում օդաները, ուր
թէժ բուխարու շուրջը մարդիկ նստուած սիրով
ականջ էին զնում հէքիաթ ասող ծերին կամ ա-
շուղին։ Այն օրից, որ երէցն սկսեց գիւղի օդա-
ները ման գալ ու ազգի գլխով անցած բաները
զրոյցի նիւթ շինել, կանայք ու աղջկէք էլ գա-
լիս էին տղամարդկանց հետ միասին լսում։ Այս
անգամ Մխիթար երէցը բուխարու մօտ փուած
մինդարի վրայ տեղ բռնելով խօսեց այսպէս։
«Իմ աչքի լոյս քնյըք և եղբայրներ, անցեալ
անգամ լսեցիք մեր այքուքէնի գտնուելու պատ-
մութիւնը, հիմի կըպատմեմ ձեզ Վարդանանց ու
Ղենդանանց նահատակութեան մասին, որ իմա-
նաք թէ ինչ ցաւ ու կըակներ տեսաւ մեր աշ-
խարհը և. Սահակի ու և. Մեսրոպի մահից ետ-
Վայ եկաւ Հայաստանի գլխին այն օրը, երբ մեր
կարճամիտ նախարարները կամ իշխանները Սահակ
կաթողիկոսի խրատին չըլսելով տարան հայ ժո-
ղովրդին ալարսիկ թագաւորին որդեգիր շինեցին։

21441-60

Կրակապաշտ թագաւորի մօտ, խաչապաշտ որդեք գիր. իսկի իրար կը բռնեն: Մանաւանդ Յազկերտ թագաւորը, որին խոռվարար սատանէն իրան գործակից էր շինել, գիշեր ցերեկ մտածում էր միայն խոռվութեան, արիւնհեղութեան վրայ, չը գիտէր ում վրայ թափի իրա դառնութիւնը: Վերջն իրա ատելութեան առարկայ դարձրեց քրիստոնեաներին, նրա գոռող սիրտը չէր վերցնում, որ հարևան յունաց կայսրը գօրեղ լինի ու քրիստոնէութեան միջոցով մանը ազգերին իրա պետութեան հետ միացրած պահի: Կայսրի աչքը վախեցնելու համար Յազկերտ Բ. զօրք ժողովեց ու յարձակուեց յունաց աշխարհի վրայ, գաւառներ աւերելով, եկեղեցիներ կրակի բերան տալով հասաւ մինչև Մծբին քաղաքը: Կայսրը Թէոդոս էր, մի խաղաղասէր, կոռից պատրաստ մարդ. գոռող Յազկերտից գլուխը հանգիստ պահելու համար մեծ ընծաներ ուղարկեց նրան ու խնդրեց դրանցով բաւականանալ, էլ վսաս չըտալ իրան: Յազկերտը խիստ փքուած այդ յաջողութեամբ դարձաւ Տիգրոն քաղաքը, որ ձմեռաւ տեղին էր, Տիգրիս գետի վրայ, հին Բաղդադին մօտիկ ու վճռեց Միհրներսեն հազարապետի խորհուրդը գլուխ բերել. — խորամանկ Միհրներսենի ծրագիրն այն էր, որ կարենայ մանը ազգերին պարսից պետութեան հետ միացնել: Շատ անգամ էր փորձ արել, նրան մի բան միշտ խանդարել էր: Այդ բանը քրիստոնէութիւնն էր, որ Գրիգոր լուսաւորչի ձեռով հաստատուել էր Հայ-

յաստանում, այդ տեղից էլ տարածուել հարկան վոքը ազգերի մէջ, ինչպէս են վրացիք, աղուանք ևն: Քրիստոնէական կրօնը դառել էր Միհրներսենի համար աչքի փուշ, ուղում էր հանել և դէն գցել: Եւ երբ գիշեր ցերեկ մտածում էր ու հար չէր գտնում, յանկարծ լոյս ընկաւ մի մարդ և նրա չար մտադրութեան աջողուելուն շատ օգնեց: Զիմանաք թէ իրանից աւելի խորամանկ մի պարսիկ էր, չէ, ընդհակառակը մի պարզամիտ հայ իշխան էր: Այդ ժամանակ մեր աշխարհը թագաւորը կորցրած՝ կառավարում էր մարզպանով, որի անունն էր Վասակ Սիւնի: Դա խիստ խելացի մարդ էր. ունէր մի փեսայ, Վարազվաղա անունով: Այդ փեսէն փուչ ոքմին էր, Վասակի աղջկայ հետ սիրով չէր ապրում, միշտ անարգած էր պահում: Մի օր լսելով որ աները վճռել է իրանից վրէժ առնել, վեր կացաւ գնաց մարզպանից զօրեղ մարդու թեկի տակ մտնելու: Այդ զօրեղը Միհրներսեն հաղարապետըն էր, որ ապրում էր Աստրապատականում, հիմիկուայ Աղբեկջանում: Նա եթէ խաղաղութիւն սիրող լինէր, կատէր՝ գնա կնկանդ հետ սիրով ապրիր, բայց Վարազվաղան նրան կաշառեց, այսինքն հոգին ծախեց: Ասեց. «Քրիստոնէութիւնից զզուել եմ, ինձ ընդունեցէք ձեր կրօնի մէջ»: Հազարապետն իսկոյն նրան թեկի տակն առաւ և մտքումը դրեց նրա աներ Վասակին էլ կոտրել, փորձանքի մէջ գցել, այսինքն իրա հաւատից ձեռ քաշել տալ: «Եթէ չի յօժարուի,

մտածում էր Միհրներսեհը, այն ժամանակ հայ աշխարհի մարզպանութիւնը նրա ձեռից կը լիւմ ու փեսին կը տամ»։ Խորամանկը միամիտ վարագվաղայի միջոցով շատ գաղտնիքներ իմացաւ հայ նախարարների ու հոգևորականների մասին, լսածների վրայ սրտում ուրախանալով հետը վերցրեց, տարաւ Տիգրոն, թագաւորին ներկայացրեց։ Յազկերտը պատուով ընդունեց, նոյնպէս երկար զրոյց արեց հետը ու կարծեց թէ որան երկնքից աստուածներն են ուղարկել ուղած ծրագիրը կատարելու համար։ Բոլոր պայտականների առաջ նրան գովարանեց ու բարձր պատուի հասցրեց, որ միւս հայ իշխանները նրա փառքի մասին լսելով՝ նախանձից գրգուեն ու նրա պէս քրիստոնէական կրօնը թողեն։

Յազկերտի օրով մոգական կրօնը շատ զօրեղացել էր. մոգերը թագաւորին հանգիստ չէին տալիս, ամեն ըստէ գովիստներով վառում էին նրա փառասիրութիւնը, որ օգտուեն նրա զօրութիւնից։ Մի օր մոգպետի հետ ներկայացան ու այս խորհուրդը տուին. «Թագաւոր, քեզ պէս պետին վայելում է ոչ թէ օգուտ քաղել հպատակներից՝ մենակ նրանց աշխատացնելով կամ պատերազմի տանելով, այլ նոյնպէս հոգս քաշել նրանց կորած հոգիների վրայ։ Քեզ տէրութիւն և փառաւոր յաղթութիւն տուող աստուածները կարօտ չեն ամենակին մարմնաւոր մեծութեան։ Նրանց ամենամեծ փափագն այն է, որ պետութեանդ մէջ եղած բոլոր ազգերին մի հաւատի

ու կրօնի բերես, մանաւանդ քրիստոնէական աղանդը խսպառ վերացնես։ Դրա համար լաւ, յարմար առիթն այս է. զօրք ժողովիր գնա քուշանների վրայ կուտածում էին այժմեան Խիվայի կողմերը, ուր Աւգանիստան, Կաբուրջիստան և Բելուրջիստանն են)։ Հրաման արա, որ հպատակ ազգերի զլխաւորներն էլ իրանց գնդերով քեզ օգնութեան գան։ Փակիր նրանց հեռու օտարութեան մէջ ու պահանջիր, որ կամքդ կատարեն։

Յազկերտին դուր եկաւ այդ խորհուրդը, այդպէս վարուելով կը ատիպէր մանը քրիստոնեայ ազգերին յարաբերութիւնը կտրել յունաց հետ հայերն ակամայ կը մտերմանային պարսիկների հետ, ինչպէս որ քրիստոնէութիւնը ընդունելուց առաջ պարթեների հետ էին։ Յազկերտը թղթեր գրեց հայոց, վրացոց, աղուանցոց և միւս խաչապաշտ իշխաններին, որ շատ շուտով զօրք ժողովեն ու հասնեն Ապար աշխարհը։ (Դա Խորասանի ներքնն էր, ուր հիմի հերաթ քաղաքն է)։ Հայերը և միւս ազգերի մեծամեծները հզօր թագաւորի հրամանն ստանալով, միամիտ սրտով ձիաւոր զօրքերը վերցրին ու երկար ու մէկ անապատներ կտրելով, իրանց հոգևորականների հետ գնացին գէպի արևելք, նշանակած Ապար աշխարհը, խոնարհութեամբ Յազկերտին ներկայացան։ Նենգաւորը սրտում ուրախացաւ, որ որսերն եկան, սկսեց հետները անուշ խօսել, պատիւներ տալ։ Առանց զլխաւոր միտքը նրանց յայտնի անելու

գնաց քուշանների վրայ, երկու տարու չափ պատերազմեց, բայց աջողութիւն չունեցաւ: Մոգերը պարապ չէին, ծածուկ քարոզում էին զօրքի մէջ իրանց կրօնը, բայց անպառող: Քրիստոնեայ զինուորները գլխի էին ընկել, չար թագաւորի միտքը խափանելու համար աւելի եռանդով էին մասնակցում իրանց հոգևորականների ժամասացութեանը:

Հազարապետը խորհուրդ տուեց թագաւորին պատերազմի անաջողութիւնից չը յուսահատուել: «Զինուորները յոգնել են, արձակիր աները, նորերը կանչիր. ու նրանցով կոփւը շարունակիր»: Յազկերտը նոր եկած զօրքերով քուշանների դէմ կոփւը յամառութեամբ առաջ տարաւ մինչև եօթ տարի: Դրա հետ էլ մոգերն իրանց քարոզութիւնն էին առաջ տանում ու միամիտներին զրաւում ծածուկ արծաթ, ոսկի բաժանելով կամ թագաւորի կողմից պարզեց ու պաշտօն խոսանալով: Վերջապէս Յազկերտը քուշանների թագաւորին նեղը զցեց ու մտնելով նրա երկրի ներսը շատ գաւառներ աւերեց: Մոգերը հաւատացրին Յազկերտին, որ այդ մեծ յաղթութիւնը Աստուածներն են տուել: Նրանց շնորհակալութիւն անելու համար թագաւորը հրամայեց անթիւցուլ ու նոխազ զոհ անել: Հրամանը հասաւ Պարսկաստան ու կրականները բորբոքուեցին ճարպակալած ցուկերով ու նոխազներով: Մոգերն ու մոգվետները մեծ պատիւներ ու պարզմներ ստացան արքունի գանձարանից, իբրև վարձ իրանց

աղօթքի: Վերջը մօտեցան ու Յազկերտին ասին: «արքայ, զօրեղ աստուածները քեզ այս յաղթութիւնը տալով ըու վրէն պարտք են դնում, որ այսուհետեւ համարձակ աշխատես, հզատակների գլխներից խաբեբայ ուսմունքները հանես ու բոլորին բերես զրագաշտի կրօնի վրայ կանզնացնես»: Յազկերտը լսեց նրանց խորհրդին ու բանակի առաջ կանգնելով բացարձակ հրամայեց այսպէս. «Ճեր մէջ եղող քրիստոնեայ զինուորները, ինչ ազգի ու ցեղի էլ պատկանելիս լինեն, պիտի ձեռ վերցնեն իրանց մոլար հաւատից ու կրօնից, գան անպատճառ արեգակին Աստծու աեղ պաշտեն ու զոհեր մատուցանեն»:

Այս հրամանը տալուց ետ Յազկերտն սպասեց մի քանի օր, երբ լսեց, որ քրիստոնեայ զինուորները յօժարակամ չեն կատարում, ամենին փակուեց Պահ գրան ներսը, որտեղից փախչելու հնար չըկար ու նրանց գլխաւորներին այսպէս սաստեց. «Չեմ թողիլ ձեզ այստեղից Ճեր աները գնաք, մինչև կրակի առաջ չը չոքէք, արեգակին չըպաշտէք»: Բոլոր քրիստոնեաները հայ, վրացի, աղուան և միւսներ, հրամարուեցին ու ասին, «թագաւոր, ինչ չարչարանք ուզում ես, տնը, մենք կրակ ու արեգակ պաշտողը չենք»:

Յազկերտն իրա սպառնալիքը կատարեց. համարձակ խօսող քրիստոնեաներին բաժանեց խըմբերի ու հեռու անապատ տեղեր ուղարկեց, որ վայրենի ցեղերի դէմ կուռելով մեռնեն: Բանակում մնացած քրիստոնեաներին ամեն տեսակ

անարգանք ու զրկանք հասցըեց, որպէսզի հաւատի մէջ թուլացնի. Որին պաշտօնով ցածացրեց, որին քաղց ու ծարաւով տանջեց, որին բորիկ ուսով ձմրան ցրտերի բերան զցեց. Ոչինչ չաղդեց նրանց վրայ, ամենը մնացին իրանց հաւատի մէջ հաստատ, որ նոյնութեամբ դառնան տները: Յազկերտին հասկացըրին, որ մեծ մասամբ ընդդիմացողները հայերն են. Նրանց կոտրելու համար այս պատիքը մտածեց. իրա նախարար Դենշապուհին ուղարկեց Հայաստան, որ ժողովրդին ցուցակագրի, լուր տարածելով թէ այդ անում է հարկերը քչացնելու ու ձիաւոր զօրքի ծանրութիւնը թեթեացնելու համար: Բայց տակից դուրս եկաւ ուրիշ բան, Դենշապուհը 1. ազատ հայ եկեղեցին հարկի տակ զրեց, 2. վանքերի միայնակեացներին հարկատուների շարքը զցեց, 3. հայ գիւղացոց հարկերն աւելի ծանրացրեց, որ աղքատութեան երեսից մողական կրօնն ընդունեն, 4. նախարարների մէջ լեզու խառնելով իրար դէմ թշնամացրեց, 5. հայոց հազարապետ Վահան ամատունու դէմ բողոքներ սարքեց, նրան պաշտօնից հեռացնելով տեղը պարսիկ կարգեց:

Հայերն իրանց հաւատի սիրու համար այս սարսափելի գրութեանը քաջութեամբ գիմացան: Պարսից մեծամեծներն անդամ զրա վրայ զարմանալով ասում էին. «հարկերի համար հայերը որտեղից են ճարում այսքան փողն ու գանձը, կամ ինչպէս է, որ սրանից ետ հայ աշխարհը շէն է մնում»:

Յազկերտը տեսաւ, որ ոչ ծանը հարկերով է կոտրում հայերին և ոչ սպառնալիքով, այն ժամանակ մոզպեաներին պատուիրեց իրա բերանից նամակ գրել հայ աշխարհի մեծամեծներին: Մոգերի գրածը երկար բան է, նրանից երկու կտոր ասեմ: Ահա սրանք են. «Ես պարտաւոր եմ իմ ըոլոր հապատակների հոգու փրկութեան վրայ մը տածել, եթէ ոչ, մեր կրօնի ասելով, ծանը պատուհաս կըստանամ աստուածներից: Եթէ գուք ձեր կողմից թոյլ զանուէք ձեր հոգու օգուտը ձանաչելու մէջ, անողոք կը պատժուէք թէ ինձանից և թէ աստուածներից... Մեր ճշմարիտ հաւատի մասին տեղեկացնում եմ ձեզ. Զրուան աստուածը ունէր երկու որդի. Որմիզդ և Արհմը: Որմիզդն ստեղծել է բարի բաները, Արհմը չար բաները: Միք հաւատալ ձեր խաբեբայ հոգեորականներին, որոնք փառաբանում են աղքատութիւնը, մահը, չափաւորութիւնը և պախարակում աջողութիւնը, փառքը, փայելչութիւնը: Նրանք ասում են՝ Աստուած խաչ է բարձրացել, մարդկանց ձեռով մեռել: Ի՞նչպէս կարելի է հաւատալ այդ տեսակ բաների: Դեերն իրանց չար տեղով չեն բռնըւում մարդկանցից և չարչարւում, ուր մնայ թէ աստուած՝ բոլոր արարածների ստեղծողը»: Յազկերտն իրա հաւատը երկար գովելուց ետ հայ մեծամեծներին վախեցնելու մտքով աւելացրեց այս խօսքերը. «Երկու ճանապարհ կայ ձեր առաջ, կամ մի առ մի պատասխանեցէք գրածներիս կամ եկէք մեծ ատեանի առաջ խօսեցէք»:

Հայ իշխանները վախենալու տեղ Յովսէփ
կաթողիկոսին առաջարկեցին, որ Արտաշատ քա-
ղաքում, որի մօտ գտնւում է Խոր-վիրապը, ժողով
անի: Ամենն էլ հասկանում էին, որ աւելի լաւ
է լինել կոյր աչքով, քան թէ կոյր մտքով, եկան
եզրիսկոպոսներ, քահանաներ, իշխան նախարար-
ների հետ խելք խելքի տուին ու մի երկար, սի-
րուն պատասխան գրեցին, որից մի երկու կտոր
կը յիշեմ: Ահա սրանք են. «մեր աստուածը
սկիզբ չունի, նա ինքն իրանով մշարնջենական է,
տարրեղէն ձև չի ընդունում: Եթէ կամենում է,
նա երևում է այն արժանաւորների մտքին, ո-
րոնք ճշմարիտ Աստուած են որոնում... Մեր
Աստուածը երկնքի ու երկրի ստեղծողն է, բայց
նրա երևելի ու աներևոյթ արարածների մէջ չար
ու բարի չըկայ, ամենն էլ բարի են: Յիսուս
Աստուծու որդին է, եկաւ յօժարակամ մահ ըն-
դունեց՝ երկրորդ անգամ գալու է ահաւոր զօրու-
թեամբ՝ մեռելիներին յարութիւն տալու, աշխարհը
նորոգելու, արդարների ու մեղաւորների մէջ
դատաստան կտրելու, արժանաւորներին պարզե-
և չարագործներին պատիժ տալու: Այս հաւատից
մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ հրեշտակներ,
ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր և ոչ որ
և է դառ հարուած: Մեր բոլոր սաացուածքը քո
ձեռին է, մեր մարմինն էլ քո առաջ, քո կամքն
է, ինչ ուղում ես արա: Տանջանքը քեզանից,
յանձն առնելլ մեղանից, սուրը քոնը, պարանոցը
մերը»:

Այս քաջ պատասխանը դեսպանների ձեռով
ուղարկեցին թագուորին: Յազկերտը կարդալ
տուեց մոգերի ու պալատականների առաջ ու
կասես կայծակնահար եղաւ: «Ի՞նչպէս թէ հպա-
տակ հայերը համարձակուեն այս յանդուգն լե-
զուն բանացնելիմ դէմ, ես նրանց ցոյց կըտամ»,
որոտաց արքան: Պարսից մեծամեծներից շա-
տերն ուղղակի զարմացել էին հայերի համար-
ձակ ու խելօք պատասխանի վրայ: Չար մոգ-
պեաը բարկութիւնից կրակ էր կտրուել, հա-
զարապետը նրանից առաւել: Երկուսով մօտե-
ցան Յազկերտին, բորբոքեցին ինչպէս մի ան-
շէջ հնոց. «Տէր թագաւոր, զուր ես վրդովւում
հայերի անհնազանդութեան պատճառով: Յունաց
կայսրն իրա զօրեղ տեղով սիրտ չի անում քո
հրամանից անցկենալ, բուշանների պէս քաշերը
քեզ գլուխ վէր բերին, հայերն ի՞նչ են, որ քեզ
ընդդէմ մնան: Տիրաբար հրամայիր, որ կամքդ
կատարուի, ուրիշ ոչինչ: Յազկերտը բարկա-
ցած սրտով հրովարտակ գրեց և ուղարկեց հա-
յոց, վրաց և աղուանից աշխարհները: Մենակ
Հայաստանից շուտով պարսից զուրը պիտի գա-
յին Սիւնեաց Վասակը, Մամիկոննեան Վարդանը և
ուրիշ ութ նշանաւոր նախարարներ. դրանց կան-
չում էր ոչ թէ սէր ցոյց տալու, որոնք մեծա-
մեծ ծառայութիւններ էին արել պարսից թա-
գաւորներին, այլ իրա ատելութիւնն ու անար-
գանքը յայտնելու: Միհրներսէն այսպէս էր գըր-
գըռում: «արքայ, դժուարը հայ նախարարներին

լոնա փոխ անելն է. նրանք որ յօժարուեն, միւս
երկների բանը հեշտ է»:

Հայ իշխանները կամ նախարարները ընդ-
դիմանալ չէին ուղում, որ ապստամբութիւն չը-
կարծուի: Գիտէին թէ ինչ նպատակով է կան-
չում Յազկերտը. վրաց ու աղուանից իշխան-
ների պէս աւետարանի վրայ երդում կերան, որ
մինչև վերջին շունչը հաստատ են մնալու իրանց
հաւատին, ապա զատկի շաբթին իրանց զօրքե-
րով ճամբայ ընկան դէպի պարսից դուռը: Առա-
ջուայ ժամանակները երբ հայերի կողմից զօրք
էր գալիս, մեծ պատուով էր ընդունում թագա-
ւորը, այժմ այդպէս բան չըկար. չար գեի պէս
կատաղած հրամայեց, որ վաղը բոլոր քրիստո-
նեայ իշխանները մոգերի հետ իրան ներկայա-
նան: Միւս օրը նրանց տեսնելիս կատաղութիւ-
նից փրփրեց, ալեկոծուեց ծովի պէս ու մոլն-
չալով խօսեց. «Երդուել եմ արեգակի անու-
նով, այն մեծազօր Աստծու, որ իրա ճառագայթ-
ներով լուսաւորում է ողջ տիեզերը և ջերմու-
թիւնով կենդանացնում բոլոր արարածներին:
Եթէ էգուց արեւը ծագելուն պէս ինձ հետ միա-
սին ծունը չէք դնիլ և նրան իբրև Աստուած
խոստովանիլ, հաւատացէք, էլ աշխարհումս տան-
ջանք չեմ թողիլ. ամենը կըթափեմ ձեր գլխին»:
Խաշապաշտ իշխանները լուռ չըմնացին, այդ
սպառնալիքին պատասխանեցին այսպէս. «մեր
հայրերն ու պապերը ծառայել են քու պապերին
և մեծամեծ պարզեների արժանացել: Մենք քեզ

աւելի եռանդով ենք ծառայում քան թէ նա-
խորդներիդ: Մեր աշխարհներն այժմ աւելի հարկ
են տալիս քո գանձարանին քան թէ առաջ: Ա-
զատ եկեղեցին անդամ այժմ հարկ է վճարում
քեզ, մենք այդ տեմնում ենք ու լուսում քո պա-
տուի համար, ասա տեսնենք արքայ, էլ ինչով
ենք վատ, որ այդպէս ես վարւում: Յազկերտի
գլուխը չըփեցրեց, որ անվրդով այս արդար նը-
կատողութիւնները լսի, գետելով խօսեց. «Ես
ձեր վճարած հարկերը համարում եմ միասակար
գանձարանիս համար և ձեր քաջութիւնը անօ-
գուտ իմ տէրութեան համար, որովհետեւ մոլո-
րուած էք դուք մեր ճշմարիտ հաւատից: Զեր
այդ մեղքի համար աստուածներն ինձ պիտի
պատժեն: Էլ երկար չեմ խօսում, եթէ ուղում
էք ձեր կեանքն ու պատիւը տեղը մնան, ինչ
որ հրամայեցի, առաւօտն և եթ կատարեցէք: Յարզպան
Վասակի տեղը դժուար էր, վախե-
նում էր փեսայի թշնամութիւնից, թագաւորի
դէմ ոչինչ չըխօսեց, բայց նրա տեղ Մամիկո-
նեան Վարդանը առաջ կանգնեց ու անվախ կեր-
պով Յազկերտին երկար պատասխանեց ու խօսքը
վերջացրեց այսպէս. «Թագաւոր, եթէ հնար լի-
նի մէկ անձս մի քանի կտոր անել, կեանքս,
կարողութիւնս քեզ ու քո աշխարհի համար զո-
հել, այդ ամենը յօժարութեամբ կանեմ. բայց
այն, որ պահանջում ես՝ մանկութիւնից սիրած
հաւատս թողիմ ու տանջանքից կամենալով ու-
րիշ հաւատ ընդունեմ—այդ անկարելի բան է:

Հաւ կըհամարեմ մեռնել քան թէ առանց իմ սիրած Աստծու ապրել։ Միւս իշխանները նոյնպէս աշխատեցին ճարտար ու իմաստուն խօսքերով թագաւորի սիրտը կակղացնել, վճիռը ետ վերցնել տալ, բայց անիրաւը կըկին ու կըկին արևի անունով երդուեց ու ասեց. «Ճեմ թողիլ ձեր խօսքը լինի, Ամենիդ շղթայակապ կուղարկեմ Սագաստան, դէպի հարաւ, որ մի մասըդ ճամբին տօթից մեռնէք, միւս մասըդ խոնաւ ու մութ բանդերի մէջ փտէք։ Փղերի հետ անհամար զօրք կուղարկեմ ձեր աշխարհները, ձեր կին ու զաւակներին Խուժաստան (հարաւ, պարսից ծոցի մօտ) աքսոր քշել կըտամ. ինչ եկեղեցի ունէք, քար ու քանդ կանեմ. ընդպիմացողին փղերի ոտների տակ տրորել կըտամ, պիտի իմ կամքը կատարուի»։

Քրիստոնեայ իշխանները տեսան, որ կատաղած է, լոեցին ու վերջը պարսից մեծամեծներին միջնորդ գցելով ժամանակ խնդրեցին մըտածելու և որոշ պատասխան տալու։ Թագաւորը ժամանակ տալուն յօժարուեց, ատեանն արձակելով գահճապետին հրամայեց իշխաններին տանել իջևանները և առանց կապանքի պահել։

Այս բանը 449 թուին էր։ Նախարարները կալանաւորուած այն էին մտածում, թէ ինչ հնար գտնեն, որ իրանց էլ ազատեն այս մեծնեղութիւնից, իրանց աշխարհներն էլ։ Շատ դժուար տեղն էին։ Վարագվաղան ուրախ էր, որ բանն այդտեղ էր մթնել, իսկ թագաւորի խորհր-

դականներից մինը, որ ծածուկ քրիստոնեայ էր, ընդհակառակ շատ էր ցաւում նախարարների վիճակի վրայ։ Հէնց որ տեղեկացաւ, թէ Յաղկերտի վճիռն անդարձ է, գիշերը մտաւ նախարարների մօտ ու ասեց. «Թագաւորը հաստատ վճուել է ձեզ շղթայակապ անել և աքսոր քշել. ես խորհուրդ եմ տալիս, որ քրիստոնէութիւնը երեսանց ուրանաք և առժամանակ մոգական կրօնը գաւանէք։ Կապկապած ինչ կարող էք անել. բոնակալի նպատակն է ձեզ սպանել և յետոյ ձեր անգլուխ մնացած աշխարհներին աիրանալ։

Նախարարները խելացի գտան այս խորհուրդը և ընդունեցին, միայն Վարդանը հակառակուեց չէր ուզում ոչ մի հնազանդութիւն ցոյց տալ թագաւորին։ Ընկեր իշխանները մոկացի Արտակին, որին Վարդանը շատ էր սիրում, միջնորդ գցեցին, որ համոզի Վարդանը շատ յամառուեց։

Քայց տեսնելով, որ ամենն էլ լալիս են, միաբանուեց մի պայմանով, որ բոլորը աւետարանի վրայ երդուեն, հայրենի հողի սահմանը հասնեն թէ չէ, նորից պապերի հաւատին դառնան ու արիւնի գնով պաշտպանեն։ Համաձայնեցին ու խրատ տուող խորհրդականի միջոցով թագաւորին խմաց տուին, որ պատրաստ են նրա կամքը կատարելու։ Լոյսը բացուելուն պէս գնացին կրակատուն, մոխրի վրայ չոքելով գլուխները կրակի առաջ խոնարհեցրին։ Յաղկերտն անչափ ուրախացաւ, երեսը քաղցրացրեց, ամենի հետ սիրամիր խօսեց. որին ազարակներ բաշխեց, որին գիւղ Պանական Գրադարան Ա. Ազնաւոր Աշխարհական Ակադեմիա Երևան 7/31 1922

դեր, որին արքայական զգեստ: Մի երկու օրից
ետ պարսից զօրքին հրաման տուեց, որ եօթ
հարիւր մոգ վերցրած շուտով հասնի հայոց, վրաց,
աղուանից աշխարհները, այնուեղի բնակիչներին
էլ զրադաշտի կրօնին դարձնի, ինչպէս իրանց
իշխան նախարարները դարձել են: Թագաւորի
հրամանն այսպէս էր.— մոգերը Հայաստան հաս-
նէին թէ չէ, պիտի եկեղեցական կարգերը վե-
րացնէին, ինչ որ արծաթէ անօթներ, իրեղններ
կային, թագաւորի գանձարանը դրկէին, եկեղե-
ցիների գոները փակէին ու կնքէին, չը թողնէին
հոգևորականներին ժողովրդի տները շրջել: Պիտի
նախարարների կանանցը մոգական կրօն քարո-
զէին, տղայ թէ աղջիկ հայ դպրոցներից հանէին,
իրանց մօտ դաս տային: Քրիստոնէական կարգով
պատկուելն արգելէին. ստիպէին մի կնկայ տեղ
մի քանիսն առնել, չըհասութիւն ասած բանը մէջ
տեղից վերացնէին, աղջիկներին հայրերի հետ
ամուսնացնէին, քոյրերը եղբայրների: Մայրերը
չըպիտի հեռանային որդիներից, թոռները պապե-
րի հետ խառնուէին: Այսպէս շատ բաների մասին
պատուէր տուեց Յազկերտը և ճամբայ գրեց իրա
զօրքին, մոգերին հայ, վրացի, աղուանցի իշխան-
ների ու հոգևորականների հետ: Զգուշութեան
համար իրա մօտ պատանդ պահեց Վասակի եր-
կու որդուն և վրաց Աշուշա բդէշխին: Վարագ-
վաղան, որ իրա արարքով քրիստոնեայ իշխան-
ների բերանում ծաղրի, նախատինքի առարկայ
էր, այժմ անչափ ուրախ էր, որ բոլոր իշխան-

ներին իրա հացից ուտացրեց, այսինքն ուրա-
ցեալ շինեց: Պարսից բանակի մէջ եղող բրիստո-
նեայ զինուորները ճանապարհին միայն իմացան
իշխանների ուրացութիւնը, անչափ ախրեցին ու
արտասուք թափելով սկսան նախարարներին ու
հոգևորականներին այսպէս յանդիմաննել. «Ի՞նչ
էք անելու ս. Մեսրոպի ու ս. Սահակի թարգմա-
նած աւետարանները, միթէ ջնէրն էք ածելու:
Դուք առաքելական քարոզութեանց վարդապետ-
ներ էիք, այժմ մոգերի մոլորութիւնը պիտի ու-
սուցանէք: Արքայութեան ժառանգ էիք, այժմ
գեհենի ժառանգ շինեցիք ձեր անձերը: Դուք էիք
մեր ամուր պարիսպը, եթէ վտանգ էր սպանում,
ձեզ մօտ էինք ապահովութիւն գտնում, ինչու
մեր ամրոցը հիմն ի վեր տապալեցիք: Դուք էիք
մեր պարծանքը ճշմարտութեան հակառակորդնե-
րի մօտ, այժմ նախատինք էք դառնում նրանց
մօտ: Աստուծու ահեղ դատաստանի առաջ ի՞նչ
պատասխան էք տալու նրանց համար, որոնք ձեր
պատճառով տանջանք են կրելու: Այս խօսքերը
նետերի պէս ցցւում էին իշխան-նախարարների
սրտերի մէջ, բայց հնար չունէին պատասխանե-
լու, չըլինի թէ դեռ իրանց երկրները չըհասած
ուրացութեան կեղծիքը բացուի: Ճարահատած
լուռ արտասուք էին թափում, որ վիշտները թե-
թեացնեն: Բայց հայ հոգևորականները չըկարո-
ղացան այդ նախատինքները կուլ տալ ու համ-
բերել, ճանապարհին ջոկուեցին զօրքի բազմու-
թիւնից, նախարարներից ու ծածուկ մի ձիաւորի

միջոցով լուր ուղարկեցին Հայաստան։ Միամիտ
մոգերը ճամբի կիսին ծեղ էին զցում թէ որ աշ-
խարհը որ խմբին բաժին կընկնի կրօնափոխ ա-
նելու։ Վերջապէս հասաւ այն օրը, երբ երեսանց
ուրացած իշխանները իրար մնաս բարով ասին
ու իրանց աշխարհի կողմը թերուեցին։ Պարսից
զօրքն ու մոգերը երեք տեղ բաժնուեցին ու
ծանր ու բարակ ճամբէն շարունակեցին։ Հոգեո-
րականների ուղարկած ձիաւորը վաղուց արդէն
հասել էր Հայաստան ու օձիքը պատռելով հայ
եպիսկոպոսներին եղելութիւնը պատմել։ Սրանք
ամեն գաւառ մարդիկ ուղարկեցին, ոտի կանգ-
նացրին հաւատացեալ ժողովրդին։ Աշխարհական
թէ հոգեորական ժողով արին ու վճռեցին ու-
րացեանների դէմ հետեւեալը։ «Երբ որ նրանք Աստ-
ծու աւետարանի վրայ դրած ուխտը կոտրել
են, էլ չըպիտի ինայել նրանց. եղբայրը եղբօրն
սպանի, որդին հօրը, կինը մարդուն և ծառան
տիրոջը։ Պարսից զօրքի ու մոգերի դէմ կուե-
լու պատրաստուեցին ոչ թէ տղամարդիկ, այլ և
քաջասիրտ կանայք։

Ժամանակ անցնելուց ետ հայ իշխանները
զօրքի ու մոգերի հետ հասան Հայաստան և իջան
Անդդ գիւղաքաղաքի մօտ, որ հիմիկուայ Ալաշ-
կերտ գաւառի մէջն է։ Հայ ժողովուրդը մեծ
բազմութեամբ ուրացեանների հանդէպ եկաւ. երբ
կինը մարդուն տեսաւ, աղջիկը հօրը, սկսան
դլմներին խփել ու անասելի սուգ ու շիւան
բարձրացնել։ Իրանց սրտի սիրելիներին բազկնե-

ըի մէջ սղմելու տեղ անիծում էին, յետ քշում
իրանցից, զզուելով երես դարձնում։ Մայրը որ-
դու կորստի վրայ էր լալիս, կինը մարդու, եղ-
բայրը եղբօր. նախկին խոնարհ ծառաներն իրանց
տէրերին էին արհամարհում։ Խեղճերը տեղեակ
չէին բանի էութեանը։ Հայ նախարարները այս
բոլոր թուր ու մոգերը տանում էին մոգերի ներ-
կայութեամբ ու լուսմ։ Մոգերն անգործ չէին,
մի քանի տեղ արդէն կրակատներ էին շինել։

Մոգետը չըկամեցաւ նախարարների պէս
գործը ձգձըգել ու դանդաղ շարժուել։ Նրանց թո-
ղելով զօրքի մօտ, ինքը մի կիրակի մոգերն ա-
ռած մօտեցաւ հայ եկեղեցուն և հրամայեց փա-
կած դռները կոտրատել և աղօթողներին դուրս
անել։ Նա տեղեկութիւն չունէր թէ հայ ժողո-
վուրդն ու նրա առաջնորդ հոգեորականներն ինչ-
պէս էին կատաղած ու զայրացած իրանց դէմ։
Հոգեորականների աչքը արիստիրտ Աւոնդ երէցն
էր, որ եկեղեցու ներսը յորդորում էր ամիսին,
որ ուժ գործ դնեն ուժի դէմ. խաչը ձեռին խոր-
հըրդակիցների ու զինուած բազմութեան հետ
դուրս եկաւ մոգերի առաջ։ Հայերից ով ինչով
կարողացել էր, զինուել էր, բնիրներ անգամ
վերցըել էին։ Մոգերի աղմուկի վրայ աղաղակ
բարձրացըն։ ոչ թէ չըթողին եկեղեցու քարին
նրանք ձեռ տան, այլ իրանը թափուելով մոգե-
րի վրայ, նրանց երեսն ու գլուխը ջարդեցին, ա-
մենին արիւնլուիկ անելով մինչև իրանց բնակա-
րանները խոկեցին։ Այս կոտի լուրը երբ տարա-

ծուեց, հայ աշխարհի ամեն ծայրերից մարդիկ վազեցին Նեռնդ երէցի գնդի մէջ մտնելու: Հոգերականները բորբոքուած հայ ամբոխի գլուխն անցնելով շտապում էին այն կողմերը, ուր մէքանի օր առաջ կրակատներ էին շինել պարսիկները: Հասնելով կործանում էին, կրակը ջրի մէջ թափում և մոգերին սպանում: Մոգպետը երբ տեսաւ հայ ժողովրդի անվեհերութիւնը և հոգեւորականների սերտ միաբանութիւնը, մնաց ապշած: Վասակին իբրև մարզպանի, իրա մօտ կանչեց ու ասեց. «Թող յայտնեմ թագաւորին, որ ձեռ վերցնի իրա մտադրութիւնից: Քանի որ հայ եկեղեցականներն այսպէս միաբան են, եթէ աստուածներն էլ մեզ օգնելու գան, մենք չենք կարող մոգական կրօնը հայ ժողովրդի մէջ տարածել: Եթէ աշխարհի զօրքերը մոգեր դառնան, սրանք բոլորին կըսպանեն: Հայ մարդը մահից էլ չի վախենում, էլ ով կարող է դէմը կանգնել... Դու իբրև հայ լաւ գիտէիր հաւատի վրայ սրանց ամուր լինելը, ինչու իսկութեամբ չէիր պատմում թագաւորին: Իշխանների գլխաւորը դուես, ինչու այս տեսակ անխոնեմ բան բռնեցիր: Չըլինք թէ քո խօսքով այս խայտառակութիւնը բերին իմ գլուխը»:

Խելացի Վասակը, որ երկու կրակի մէջ էր գտնւում, մոգպետի երկար գանգատը լսելուց ետ ասեց. «ինչ ասում ես, ճշմարիտ է, ես էլ եմ ցաւում եղածի վրայ: Բայց շուտ յուսահատուելը գործը կըփչացնի, համբերիր, ամեն մէկի

վիշտդ մի ասիլ, մինչև Սիւնեաց աշխարհից (Ղարաբաղից) զօրք բերել տամ, թիկունքս ամրացնեմ, մեր եկեղեցականների մէջ մի պառակտում զցեմ: Եթէ այդ գլուխ բերեմ, այն ժամանակ թագաւորի հրամանը կատարուած, վերջացած է»: Վասակի այսպէս վարուելու պատճառն այն էր, որ Յազկերտին դուր գալով մարզպանութիւնը իրա ձեռից չըզցի. Եթէ դրա հակառակը գնար, պաշտօնի հետ պատանդ թողած որդիքն էլ կըկորցնէր: Վասակը նախարարների մէջ ունէր իրա պէս մտածողներ, նրանք էլ ուզում էին այնքան քողարկուած մնալ, մինչև թագաւորը կրօնափոխութեան դժուարութիւնները տեսնելով՝ ինքը հրաժարուի իրա մտադրութիւնից: Բայց նախարարների մեծ մասը և արդանի կողմն էր, որի համար անտանելի ծանր էր ուրացութեան քողի տակ մնալը: Նա կարծում էր՝ ժամանակ է անցկենալ հոգեսորականութեան կողմը և նրան հետեւող ժողովրդի հետ ապստամբութեան դրոշակը արձրացնել: Բայց երբ տեսաւ, որ մարզպան Վասակը մնացած մոգերի ապահովութեան համար Սիւնեաց աշխարհից զօրք բերել տուեց, յետոյ սկսեց հասարակ ժողովրդից իրա կողմն անցկացնել, որին ահ տալով, որին խնդրելով կամ կաշառելով, զգաց Վարդան սպարապետը, որ այդ հանդամանքներում ապստամբութեան գործը գլուխ չի գալ, դառնացած սրտով վճռեց թողնել տուն ու կալուած և գերդաստանով տեղափոխուել յունաց բաժինը, դրանով գոնէ ուրա-

ցութեան անունը իրանից հեռացնել։ Այդպէս էլ արեց. մի զիշեր վերկացաւ Վարդանը ու գնաց։ Հէնց որ այդ լուրն լնկաւ ուխտապահ նախարարների ականջը, խիստ տիրեցին. բաժանուեցին Վասակից, անցան Ղևոնդի կողմը ու հոգեւորականների հետ խորհուրդ արին, որ ապսպիքն Վարդան սպարապետին՝ վերադառնայ, նրա հետ սկսեն աղատ համարձակ գործել իրեւ հայ քրիստոնեայ։ Վասակն այդ իմանալով ինքն էլ եկաւ խորհրդին ու երդուելով հաւատացրեց, որ ինքը սրտով քրիստոնեայ է, բայց դրսից ակամայ մոգական կրօնն է պաշտում։ Ասածը հաստատելու համար Աւետարանի վրայ ձեռ դրեց, իրա կողմից Վարդանին նամակ գրեց, որ ետ դասնայ։ Միւս նախարարները նամակ գրելով՝ Վարդանին յիշեցրին Պարսկաստանում արած ուխտը, խնդրեցին վերադառնալ, որ իրանք պատրաստ են նրա հետ կուլել ու մեռնել կրօնի ու հայրենիքի համար։ Վասակն իրեւ հայ աշխարհի մարզպան իրա մատանով կնքեց նամակները և ուղարկեց։ Վարդանը բոլոր հայ նախարարների երդումն ու կնիքը տեսնելով թղթերի վրայ, համոզուեց ու ճամբի կիսից ետ դարձաւ հայ բանակատեղին, սկսեց նոր գնդեր կազմել կամաւոր զինուորներից։ Ղևոնդ երէցը շարունակ այս էր կրկնում հայ իշխանների ականջին. «միաբանեցէք, մի բաժանուէք, զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող շարեաց»։ Եւ Միացան։ Բայց Վասակը երկերեսանի գործելուց ձեռ

չըվերցրեց. մոգակետի մօտ էլ ուրիշ լեզու էր բանացնում, որպէս զի իրա խաբեբայութեան մասին թագաւորին բան չըգրի։ Մոգակետին մի ապացոյց տալու համար, որ Յազկերտին հաւատարիմ է, մոգերին բաժանեց նախարարների տներում, որ մոգական կրօնը սովորցնեն. դրա համար մեծ ոռնիկներ նշանակեց, իրեւ մոգական կրօնի ջերմեռանդ երկրպագու կրակատներում ինքը զոներ արեց, քրիստոնեաներին ուժով ստիպեց, որ գան արեգակին պաշտեն։ Վասակի այս արարքից խրախուսուելով մոգերն ու պարսիկ զինուորներն սկսան անվայել, գէշ բաներ բռնել. այսքան երես էին առել, որ մտնում էին հայ եկեղեցին, կանթեղները հանգնում ու աղօթող կանանց վրայ յարձակուելով նրանց հագուստները պատըռուում։ Այս բաներից անչափ վրդովուած՝ եպիսկոպոսները խաչ ու աւետարան վերցրած ահագին բազմութեան հետ թափուեցին Վարդան սպարապետի մօտ ու աղաղակեցին. «այս անարգանքները տանել չենք կարող, նախարարներդ նախ և առաջ հոգեսորականներիս գլուխը կտրեցէք, յետոյ մեր եկեղեցուն ձեռ տուէք։ Պարզ ասա, եթէ Վասակը առանց բոյօժարութեան է անում այս չարութիւնները, այն ժամանակ մենք ու մեր հաւատացեալ ժողովուրդը անպատճի չենք թողել նրան ու իրա համախոն խմբին»։ Ուխտապահ իշխաններն ու եկեղեցականները այժմ հաստատ համոզուեցին, որ Վասակը սրտանց է ընդունել մոգական կրօնը, որ

սուտն իրանց հետ է, իսկ ճշմարիտը մոգերի հետ, ամեն յարաբերութիւն նրա հետ կտրելով խմբուցին Վարդանի շուրջը ու գիշեր ժամանակ խորհուրդ արին, թէ ի՞նչ ծրագրով ապստամբութիւնն սկսեն, որ աջող լինի: Իշխաններից մէկը Վասակի համախոհ էր, չըմիաբանուեց ծրագրին. բացի այդ գնաց և Վասակին յայտնեց գաղտնի խորհրդի մանրամասնութիւնը: Այդ գաւաճանին անպատիժ չըթողին զրգուուած հայերը, փախչելիս ետեից հասան, բռնեցին ու մի մի քար վերցնելով շանսատակ արին: Այդ գէպը մեծ սարսափ գցեց միւս ուրացողների վրայ: Նրանցից շատերը մոռացան թագաւորի հրամանն էլ, նրանից ստացած պարզեներն էլ, ու վերադարձն իրանց հաւատին և ուխտապահներին միանալով շարքերը խտացըին: Ամենը կատաղած էին պարսիկների դէմ, երեք մասի բաժանուած գիշեր ժամանակ գնացին, յարձակուեցին արքունի զօրքի վրայ, շատին կոտորեցին, երևելի մարդկանցից շատ շատերին կապկապեցին և իրանց իշխանութեան տակ բերդերում պահեցին: Հոգեորականների առաջնորդութեամբ հայ զօրքը տարածուեց այն գաւառները, ուր մոգերի ոտը դիպել էր, բոլոր կրակատները կործանեց և կրակը ջրի մէջ թափեց: Մոգերը եկել էին, որ հայ եկեղեցիների գանձերը աւար տանեն, ամեն տեղ իրանք իրանց անձերով աւար դարձան հայ ամբոխի ձեռին: Արքունի զօրքերի ձեռից խլուեցին համարեա բոլոր աւաններն ու ամբոցները: Հայ մարդը

ոտի էր կանգնել պարսկի դէմ ու ամեն զաւառում ապստամբութեան դրոշ պարզել: Ուրացող չար Վասակը չազատուեց, նա էլ իբրև գերի ընկաւ ապստամբ հայերի ձեռը: Բայց խորամանկութեան ճանապարհը ըսնելով ընկաւ հոգեուրականների ոտները, եպիսկոպոսներին պաղատեց, որ իրան ներեն, արտասուք թափելով հաւատացրեց, որ զղում է իրա գարշելի արարքի վրայ: Աւետարանը համբուրեց, մէկի տեղ տասն անգամ երդուեց, որ հաստատ է մնալու մայրենի սուրբ կրօնին: «Եթէ ինձ ուխտապահների թուից հանում էր, ասեց խորամանկը, աւելի լաւ է, այս ըոպէիս ինձ սպանէք»: Խղճացին ու կրկին ընդունեցին հայ քրիստոնեաների շարքը: Վասակը միւս իշխանների հետ մտաւ եկեղեցի ու երդուեց պաշտպանել սուրբ հաւատը մինչեւ վերջին շունչը:

450 թուին էր, երբ Հայաստանը այսպէս ոտի կանգնելով ջարդեց չար Յազկերտի կամակատարներին ու իրա միջից վորնդեց: Այդ ժամանակ շատ շտապ ու նեղուցած եկան աղուանից աշխարհի հազարապետն ու եպիսկոպոսը և հայերից օգնութիւն խնդրեցին պարսիկների դէմ: Յայտնեցին, որ պարսից զօրքը երեք հարիւր մոգերի հետ թափուած աղուան քրիստոնեայ ժողովրդի վրայ ուժով կրօնափոխ է անում:

Ճշմարիտ է, այդ միջոցին հայերը ոչ թագաւոր ունէին և ոչ էլ դրսից օգնութիւն, բայց հայրենասիրութեան հոգին եկեղեցականների յոր-

դորներով այնպէս վառռւած էր նրանց մէջ, որ հէնց լուր էր տարածուել թէ կրօնն ու հայրենիքը պիտի պաշտպանել, ամեն ծայրերից վաղելով եկել էին գնդեր կազմել: Մեր աշխարհի մարզպանը էլի խորամանկ Վասակն էր: Նրա խորհրդով հայ զօրքը երեք մաս արին. առաջին գունդը գնալու էր Հայաստանը պաշտպանելու Ատրպատականի կողմից, ուստի հիմի կոչւում է Ադրբեջան, Ղարադաղ. Երկրորդ գունդը Վարդան զօրավարի ձեռի տակ պիտի Վրաստանի միջով գնար գէպի Ճորայ գուռը, Դերբենդի կողմը, պարսից կուսակալ Սեբուխտի վրայ, որ Աղուանքի եկեղեցիքը քանդում էր: Երրորդ գունդը մնալու էր Վասակի իրաւունքի տակ Հայաստանը պահպանելու: Դուք կասէք՝ գառը գայլին պահ էին տուել: Ի՞նչ անէին, քանի որ խորագէտ մարզպանն իրան աղաւնու պէս էր պահում, միւս հայ նախարարների հետ եռանդով հոգս էր քաշում երկրի համար, որ իրա ասելով, պարսկական լուծը բոլորովին գէն գցի: Ահա մի ապացոյց. հայերը վճռել էին ընդդիմանալ Յազկերտին, բայց մենակ չէին կարող. կարիք կար դրսի օգնութեան. խորհուրդ արին գրով դիմել յունաց Թէոդոս կայսրին, նրա մեծամեծներին, իրանց հարևան ցեղերի իշխաններին, որ զօրքով օգնութեան գան: Այդ նամակների տակ Վասակ Սիւնին ինքն էլ, իրեն Հայաստանի մարզպան ստորագրեց: Կայսրի վրայ գրած թուղթն ուղարկեցին չորս հայ իշխանների ձեռով Վահան Ամաստունու, Հմայեակ Մամիկո-

նեանի, Մեհրուժան Արծրունու և Ատոմ Գնունու. և լիայու էին, որ մեծ զօրք կրստանան այնտեղից: Վարդանը պիտի շտապէր, թէ չէ հարևանադուանները ձեռից գնում էին. իրա հետ վերցնելով Խորէն Խորխոռունի և իրա փեսայ Արշավիր Կամսարական իշխաններին, զօրքը խաղացը Եցղէպի աղուանից աշխարհը, որ Թարթարի մօտից սկսած ձգում էր մինչև Դերբենդ:

Թէոդոս կայսրը սրտին մօտ ընդունեց հայերի ինդրուածը, պալատականներից ժողով արեց ու հարցըց թէ ի՞նչ հնար գործ գնեն, որ արևելեան քրիստոնեայ եկեղեցիքը անօրէն Յազկերտից չըկործանուեն: Յոյս էր տալիս, որ կօգնի հայերին, բայց դժբաղդաբար այդ օրերին մահը վրայ հասաւ նրան: Նրա տեղ նստեց Մարկիանոս անունով մէկը, որ չար մարդկանց խրատին ականջ զնող էր: Սա ոչ թէ ուշադրութիւն չը գարձեց հայերի ինդրքին, այլ Յազկերտի մօտ գեսպան ուղարկեց, թէ հայերն եկան ինձնից օգնութիւն ինդրեցին քո գէմ կոռուելու համար և ես մերժեցի:

Վասակը հէնց որ լսեց թէ կայսրի մօտ գընացած հայ իշխանները դարդակ ձեռով են գալիս, միաքը փոխեց ու կրկն անցաւ զօրեղ պարսիկների կողմը: Այդ բանում նրան համամիտ էր Մամիկոնեան Վասակը, որ յունաց բաժնի Հայաստանում սպարապետ էր ու Աստծու ձամբից դուրս եկած մարդ: Վասակ Սիւնին աշխատեց ամեն կողմից դռները փակել, որ հայերին օգնող

չըլինի և Մամիկոնեան Վասակի հետ մեծամեծ չարիքներ բերեց իրա խնամքին թողած Հայաստանի զվարին։ Հայ նախարարների մէջ գտնուեցին թուլահաւատներ ու իրանց զօրքով անցան Վասակի կողմը։ Պարսից զօրքից էլ ինչքան կարողացաւ, բաշեց դէպ իրան և խորամանկութեամբ գնաց սիւնեաց (Ղարաբաղի) աշխարհի լեռնոտ, ամուր տեղերը, պատճառ բռնելով թէ այնտեղից ծածուկ յարձակուելու է պարսից գնդի վրայ, որ աղուանից աշխարհից հալածի։ Խորամանկ փառամէրը այդ տեղից գաղտնի գեսպաններ ուղարկեց Առաքատական թէ Միհրներսէի մօտ և թէ նրա ստորագրեալ պարսիկ մեծամեծների մօտ և առեց։ Հայերի միաբանութիւնը քանդեցի, զօրքը մաս մաս արի, մի մասն ուղարկեցի Հեր և Զարեանդի (Խոյ և Սալմաստ) կողմերը, մի մասը իմ ձեռին է, դա թագաւորական զօրքին վնաս չի տալ, միամիտ եղէք։ Վարդանին սակաւաթիւ գնդով ուղարկեցի Աղուանք. համարձակ դուրս են կէք և նրա դէմ պատերազմեցէք. անկասկած կը յաղթէք։ Ոյս որ լսեց Դերբէնդի մարզպան Սերուխար, բազմաթիւ զօրքով շտապ անցկացաւ Կուր գետը և եկաւ Վարդանին պատահեց Խաղխաղ քաղաքի դէմ ու դէմ, (Շամշադին գաւառումն է, Զագամ գետի վրայ, կոչում է Խալխալ, Զուլգագարով թուրք բէկերին է պատկանում այժմ). դա հին ժամանակ հայ թագաւորների ձմերոց էր. Խոսրով թագաւորն այդտեղ հիւր պահեց Անակ իշխանին, որ վերջն իրան

ուղանեց։ Քաջ Վարդանի զօրքը պարսիկների հետ համեմատելով քիչ էր. բայց արիասիրաներից էր բաղկացած. երեք մաս արեց, մէկը տուեց Կամսարականին, միւսը Խորխոռոռնուն, ինքը մնաց մէջտեղը. Աստծու անունը տալով յարձակուեց թշնամու վրայ. Հայերն ամենից առաջ կոտորեցին պարսից աջ թեր, յետոյ գրոհ առւին ձախի վրայ և դաշտի երեսով մին փռեցին նրանց դիակները։ Կենդան մնացածները աշխատեցին փախչել. բայց նրանց մի մասը հալածողների սրերից կոտորուեց, մի մասը Կուր գետի ջրերում խեղդուեց, պարսից մեծամեծները նաւակներ նոտելով զլուխներն ազատեցին. Դէպի վերև փախչողներն ընկան Լինաս գետի (այժմ Զագամ) ձորերը ու ծմակների խորքերում թագնուեցին։ Հայ զօրքը տէր գարձաւ ահագին աւարի. արծաթ, ոսկի, գէնը ու զրահ, զարդեր, ձիաներ մնացին նրանց։ Այդ յաղթութիւնից ետ հայերն առաջ գնալով յարձակուեցին պարսից ձեռի տակ գտնուող ամրոցների վրայ, ինչ որ մոգեր կային՝ ամենին կոտորեցին ու աղուանից եկեղեցիներն ապականութիւնից մաքրեցին։ Այնուհետև Վարդանն իրա քաջերի հետ կուր գետն անցնելով, շտապեց հիւսիսային սահմանի վրայ, ձորայ դռնում պարսից պահակը քանդեց, կործանեց ու Հոն ցեղի հետ բարեկամանալով դաշ կապեց, որ հարկաւոր դէպում հայերին օգնեն պարսից դէմ։

Ասի, որ նենգաւոր Վասակը քրիստոնէու-

թիւնը թողնելով պարսից կրօնն ընդունեց: Հայ աշխարհի շատ տեղեր, որ չէին ուզում Յազկերտին հպատակուել, աւելի էր, անթիւ գիւղեր, աւտաներ կրակի բերան տուել ու ընտանիքներին փախստական դարձրել իրանց բնակութիւններից: Անարգել էր եկեղեցիները, սեղանի արծաթէ սպասները յափշտակել, քահանաների ընտանիքները գերի էր վերցրել, իրանց շղթայակապ արել, բանտարկել: Զիաւոր զօրը տարածելով ողջ երկիրը տակն ու վրայ էր արել: Մամիկոնեան, Կամսարական և այլ իշխանական տըներից մանկահասակ տղաներին ժողովել էր իրեւն պատանդ ու տարել Սիւնեաց աշխարհի ամուր տեղերում պահել:

Այսքան զուլումը եղել էր Հայաստանում, Վարդանն անտեղեակ, հեռագիր չկար այն ժամանակ, որ իսկոյն իմաց անէին. ձիաւոր ուղարկեցին և անցած ցաւերը մի առ մի յայտնեցին հայոց սպարապետին: Սա իրա ընկեր իշխանների հետ ճամբայ ընկաւ դէպի Հայաստան: Հասկանալի է թէ Վարդանն ինչպէս զայրացած կրկնէր նենդաւորի վրայ: Երբ լուր տուին թէ Արարատեան գաւառում է, զօրքով շտապեց այնտեղ: Վասակն այդ իմանալով՝ մի գիշերում փախաւ իրա աշխարհ՝ Սիւնիք: Այնպէս վռագ փախաւ, որ վերցրած գերիքն ու աւարը թողեց տեղն ու տեղը: Դիտմամբ զօրքի պաշարն ամեն տեղ ոչնչացրել էր. զրա համար Վարդանն ունեցած զօրքի մի մասին արձակեց, որ գնան ձմեռը ի-

րանց տներում մի կերպ անցկացնեն, իսկ միւս մասին կարգադրեց գնալ Սիւնեաց երկրի վրայ: Ուխտապահ զօրքերը Ղարաբաղի շատ գաւառներ աւերեցին, Վասակին ու Նրա զօրքին այնպէս նեղը գցեցին, որ շատ բերդերում պաշարը հատաւ, բնակիչները սովոր ազատուելու համար սկսան սատկած էշի ու ձիու մսով կերակրուել: Վարդան սպարապետը շատ էլ սրտում տրորւում էր հակառակորդ հայերի վասաները տեսնելիս, բայց մեղը Վասակինն էր, որ ուխտապահ հայ երին այդ աստիճան գանացրել էր: Ուրացած իշխանների հետ կային նոյնպէս հայ հոգեորականներ՝ Վասակի կողմն անցած: Ուխտապահ իշխանները հաւաքուած էին Վարդանի շուրջը, իսկ հոգեորականները Ղեռնդի. այդ երկուան էին, որ անյուսահատ գործելով շունչ ու հոգի էին փչում ամենին:

Կատարուած դէպքերի մասին Յազկերաը արդէն տեղեկութիւն ունէր, մոգպետը հաղորդել էր, բայց ոչ արդար կերպով: Հայերը շատ նշանաւոր պարափիկների էին կալանաւորել. նրանցից մէկին կապանքից ազատելով շրջեցրին ամեն տեղ, հայ աշխարհի բոլոր վասաները ցոյց տուին, միաւոմի պատմեցին Վասակի արած խաբէութիւնները և ուղարկեցին թագաւորի մօտ: Վաղօրօք Վասակի կողմակիցները եղել էին Յազկերաի մօտ. պատմել էին ու բոլոր յանցանքը գցել հայ հոգեորականութեան վրայ: Այժմ, երբ թագաւորը պարսիկի բերանից լսեց եղելութիւնները,

յանցանքը բարդեց իրա խորհրդակիցների, մոգերի և մոգպետի վրայ: Եւ մտադրուում էր նըրանց պատժել, սակայն Միհրներսէնը մէջ խառնուելով խափանեց, ամենի մեղքը ներել տուեց ու թագաւորին համոզեց այսպէս. «արի, հայերին առ ժամանակ հանգիստ թող, ինչպէս ուզում էն, քրիստոնէութիւնը թող գաւանեն»: Յազկերտն ականջ դրեց նրան ու գրեց հայոց, վրաց, ազուանից և միւս փոքր երկրների վրայ, որ ազատ են իրանց կրօնը պաշտելու մէջ: Վասակի փափագն էլ այդ էր, որ երես ունենայ հայ ժողովրդի հետ խօսելու: Ուխտադրուժ քահանաներին դէս ու դէն ուզարկեց, որ հասկացնեն այսպէս. «ես ձեր թշնամին չեմ, ես էլ ծածուկ հայ քրիստոնեայ էի, միայն ամեն կերպ աշխատում էի, որ թագաւորի հրամանը ձեր գլխից հեռացնել տամ: Ահա փառք Աստծու, ազատ է թողել կրօնը, այսուհետև ինչպէս ուզում էք, ձեր հաւատը պաշտեցէք. ինչ որ ձեզանից շարժական թէ անշարժ բաներ են խլուած և ուրիշներին բաժանած, ամենը պիտի հրամայեմ վերադանեն: Մինչև օրս պատահածները, կոտորած թէ ապատամբութիւն՝ ամենն էլ թագաւորը ներում է, բայց ինձ հետ նա էլ խոսքով չըգնաք և նոր կոփներով աշխարհը կորստի չըմատնէք»: Ժողովուրդը վախեցել էր Վասակի կեղծաւորութիւնից, չէր ուզում ոչ նրա խօսքին հաւատալ և ոչ նրա համախոհ իշխանի կամ հոգևորականի: Վարդանանք

ու Ղեոնդեանք զգուած պարսից նենգութիւնից, զանակը ուկորին հասած միջոցին հայ ժողովրդի հետ արդէն գուրս էին եկել սրով ու թրով զիմագրել պարսից զօրքին, յուսահատութեամբ կոռուել էին ու յաղթել: Այժմ ետ կենալու միտք չունէին, լաւ էին համարում դարձեալ զէնքը ձեռին դաշտ դուրս գալ, ճակատ առ ճակատ կոռուել, կամ իբրև յաղթող խաղաղութեան պայմաններ առաջարկել ամբարտաւան պարսկին կամ ազնիւ մահով վկայել, որ հայերը սուրբ գործի համար կեանքներն էլ չեն խնայում:

Վասակը Վարդանանց ու Ղեոնդեանց այս եռանգը տեսնելով ինքն էլ հանգիստ չէր մնում. ուխտադրուժ հոգեորականներին գործիք շինած գիշեր ցերեկ աշխատում էր ուխտապահների գընդից մարդիկ որսալ և ուրացողների թիւը շատացնել: Իրան երևակայելով իբրև ապագայ հայոց թագաւոր՝ խոստումներ արեց ու իրա կողմը քաշեց ութ նշանաւոր նախարարների: Պարծենալով թուղթ գրեց Ասրպատական նստող մեծ հազարապետին այս խօսքերով. «Երկպառակ եմ արել թէ հայոց զօրքը և թէ հայոց հոգեորականութիւնը, միաբանական ուխտ չըկայ: Շուտով ամեն հնար գործ կըդնեմ վրացիների բարեկամութիւնը հայերի հետ քանդելու. չեմ թողիլ, որ Աղուանից և միւս փոքր աշխարհների զօրքերը առաջ գան: Թագաւորական գունդը կըդնեմ ձոռքայ գուաշ, որ հոները շանցնեն և հայերին օդնեն»: Միհրներսէն ուրախացած այս տեղե-

կութիւնների վրայ՝ իրա մօտ Փայտակարան (Կուր և Արաքս գետերի մէջտեղը) կանչեց փառասէր Վասակին ու նրա համախոն իշխաններին։ Վասակը հետը տարաւ նոյնպէս ուրացեալ հոգեւորականներին ու ներկայացնելիս շեշտեց. «ահա որանց աջակցութեամբ եմ այնքան հոգիք մեր կողմը քաշել»։ Հազարապետը գովեց հաւատափոխ քահանաների եռանդը ու թագաւորի անունով ընծաներ տուեց. Վասակից մի առ մի իմացաւ ապստամբ Վարդանանց ու Ղեոնդեանց պատրաստութիւնները ու նրանց մտադրութիւնը, և վճուեց ապստամբութիւնը ջնջել. կանչեց պարսիկ զօրագլուխներին ու առաջարկեց Հայաստանի վերաբերեալ գործերում հետևել Վասակի ցուցմունքին։ Պարսից զօրքի հրամանատարութիւնը յանձնեց Մուշկան Նիւսալաւուրտին, պատուիրելով՝ գնալ ըմբոստ հայերին պատժել։ Ինքը գնաց Տիղբոն, Յազկերտի մօտ գովեց Վասակի հնարագիտութիւնը թէ ինչպէս կարողացել է երկպառակութիւն գցել հայ զօրքի ու հոգեորական դասի մէջ։ Սակայն թագաւորը հազարապետից պատերազմի ահագին պատրաստութիւնների մասին տեղեկանալով խիստ շփոթուեց ու գլուխը շարժելով ասեց. «անօրէն Վասակը հաւատացնում էր, որ կրօնափոխութիւնը գլուխ կը գայ առանց դժուարութեան, այս ի՞նչ խաղ է, որ սարքել է. ախ, թէ պատերազմից ողջ կազատուի այդ խաբերան, ես գիտեմ թէ ի՞նչ խայտառակ մահ կուտացնեմ նրան»։

Գանք հայ զօրքին. նախարարների, իշխանների զօրքերի թիւը առհասարակ հասնում էր 80,000 հոգու, թագաւորն էլ ունենում էր 40,000-ի չափ. Վատանգի ժամանակ կարող էին աւելի հաւաքել ու զօրեղ թշնամուն անգամ զիմազրել. Բայց այժմ ցաւը նրանում էր, որ Վասակի շնորհով պառակտուած էր Հայաստանը. մի քանի նահանգների զօրքեր կոռւելու էին Մայր-հայրենիքի դէմ. Դրսից ամեն օգնութիւն կարուած էր, հայերի յոյար միայն իրանց վրայ պիտի լինէր, այդ էլ չէր աջողուում. Օրինակ՝ յունաց բաժնում եղած հայերը չէին կամննում Վարդանանց բանակը զինուոր ուղարկել, Հայաստանի հիւսիսային և արևելեան գաւառների հայերը խառն էին վրացիների, աղուանների հետ, նրանք էլ չէին ցանկանում շարժուել տեղներից. Վանայ ծովի հարաւում Աղձնիք, Տմորիքը ինքնազլուխ լինելով չէին ուզում ուրիշին ոչ մնասել և ոչ օգնել. Վարդանն ուզում էր ստոյգ իմանալ, թէ ուխտապահները որքան մարդ կարող են հանել պատերազմի դաշտը. Հաստատ խօսք էին տուել զօրք ուղարկելու միայն հինգ նահանգներ՝ Այրարատ, որտեղ էջմիածինն է, Տուրուբերան (Մուշի, Սասունի կողմը), Վասպուրական (Վանի, Վարագի կողմը), Սիւնիք և Մոկք. Դառնում էր մի բանակ, բաղկացած 60,000 հոգուց. Գանք հայոց սպարապետին՝ քաջ Վարդանին, նա ո. Սահակի թոռն էր, աղջկայ կողմից, Աշակերտ էր եղած ո. Մեսրոպի անդրանիկ դպրոցի ու յետոյ իրա

պապի ձեռի տակ կըթուած, դաստիարակուած։ Արդէն 50 տարեկան էր, քսան տարու չափ սպարապետութիւն էր արել հայ զօրքի վրայ, բառասնից աւելի պատերազմների մէջ էր մտել ու յաղթող դուրս եկել։ Յազկերար շատ անգամ էր ականատես եղել Վարդանի հերոսութիւններին, որովհետև մեծ մասամբ պարսից ծառայութեան մէջ էր եղել։

451 թուին հայերը նոր էին կատարել Զատիկը, երբ Վարդան զօրավարին լուր տուին թէ պարսից մեծ բանակը շարժուած դալիս է Հայաստանի վրայ, և արդէն մտել է Հերևանի (Խոյ և Սալմաստ) գաւառները։ Վարդանն իսկոյն ձիաւորներ ուղարկեց ուխտապահ իշխանների մօտ, որ շուտ պատրաստուեն։ Հաւատարիմ գնդերն ու վաշտերը արագութեամբ ժողովուեցին հին Արտաշատ քաղաքը, Արաքսի վրայ։ Բոլորի հաւանութեամբ Վարդանն Առանձար իշխանին 300 ձիաւորով ուղարկեց թշնամուն ականելու ու նրա ուժի, դիրքի մասին ստոյգ տեղեկութիւններ բերելու։ Քաջ Առանձարը գնաց, բացի ընդունած յանձնարարութիւնը կատարեցից, այլ և պարսից վերջապահ զինուորների հետ կոռու բռնուեց, յաղթեց նըանց ու աւարով վերադառաւ հայոց բանակը։ Այդ հանգամանքը հայ զօրքերին սիրտ տուեց։ Վարդանը մտադրուեց գնալ պարսից դէմ ու ամեն ինչ վերջացնել չեր և Զարեհանդ գաւառում, չըթողնել, որ պարսից զօրքը Հայաստանի սիրտ մտնի։ Բայց

դաւաճան Վասակի ու համախոհների աջակցութեամբ պարսից զօրքը շատապով հասաւ Արտազ գաւառը և բանակ զրեց Աւարայր զիւղի մօտ Ահոելի ուժ էր պարսից բանակը, միայն 50.ի չոփ փղեր ունէր, իւրաքանչիւրի վրայ մի մարտկոց շինած, 12 նետաձիգ զինուորի համար և իւրաքանչիւրի մօտ 3000 սպառազէն զինուոր դրած։ Յազկերարի գունդը, որ մատեան էր կոչում, նոյնպէս այնտեղ էր։ Պարսիկներին միացած էին Վասակի ու միւս ուրացողների գնդերը 20 հազար հոգուց աւելի։ Զօրքի ճակատը Տղմուտի աջ ափը (հիմի Աղ. Հայ է կոչում) բոնել էր, ընդարձակ դաշտի վրայ, աղատ տեղ չէր մնացել։ Բանակը ամեն կողմից ամրացնում էին, մի տեղ փոս էին փորում, միւս տեղ պատնէշ գնում, բերդի պէս փակում, չըլինի թէ Վարդանի զօրքը յանկարծ յարձակուի ու շփոթութիւն գցի մէջները։ Հրամանատար Նիւսայաւուրաը անյաղթ համարուող մատեան գնդի հետ կանգնել էր բանակի մէջ տեղը։ Զախ թեր Դովդ զօրավարի ձեռիտակն էր։ Ուրացեաւ հայերի զօրաբաժինը աջ թերումն էր. ամենալաւ կոռուողներն այդտեղ էին։ Ամենավերջը կանգնած էր չորրորդ գունդը, որի զինուորն էր փղապետ Որտաշիրը, ու իբրև վերջապահ հարկաւոր դէպում օգնութեան էր հասնելու միւսներին։

Ինչպէս մեր Եղիշէ պատմագիրն է ասում։ Հայ բանակը չորս գունդ էր բաժանուած։ Նըանց երեքը երկար ու մէկ շարուած էին Աւարայրի

գաշտի մէջ Տղմուտ գետի ձախ ափին։ Չորրորդ
գունդը իբրև վերջապահ վտանգի ժամին պիտի
օգնութեան հասնէր։ Վարդանն աջ թել յանձ-
նել էր Խորէն իշխանին և օգնականներ նշա-
նակել Արսէն և Ներսէն իշխաններին։ Չախ թել
յանձնել էր Թաթուլ, Փափագ և Տաճատ իշխան-
ներին։ Միջին թեկ զլխաւորութիւնը յանձնել
էր Արծրունեաց Վահանին և նրան ընկերներ
տուել Արծրունեաց Ներշապուհին և Մոկաց իշ-
խան Արտակին։ Չորրորդ գնդի հրամանատարու-
թիւնը յանձն էր առել ինքը, օգնականներ վերց-
նելով իրա եղբայր ու մագասպին ու քաջ Ար-
շաւրին։

Բոլոր զօրքը կանգնած, Վարդան սպարա-
պետը նախարարների ներկայութեամբ մի եր-
կար ձառ ասեց, որի զլխաւոր կտորները սրանք
են, Վարդանն ասեց. «Չատ պատերազմների մէջ
ենք եղել իրար հետ, մեծ մասամբ յաղթել ենք
քան թէ յաղթուել։ Մենք այն ժամանակ կուռմ
էինք մահկանացու թագաւորի հրամանով, ուս-
տի բոլոր ակնկալութիւնները մարմնի պարծանք
էին։ Կոռուց փախչողը վատանուն էր դառնում
կամ թագաւորից անողոք պատիժ կրում, իսկ
քաջ կոռուղը ազգի մէջ հերոսի անուն էր ժա-
ռանգում և անցաւոր թագաւորից մեծ պարգև-
ներ ստանում։ Շատ վէրք ու սպի ունենք մեր
մարմնի վրայ, որոնց համար պարգևներով վար-
ձատրուել ենք։ Սակայն այդ ամեն քաջութիւն-
ները համարում եմ անօդուտ և ընդունած պար-

գնները ոչինչ, որովհետեւ անցուկ բաներ են։
Եյլ բան է, եթէ այդ քաջագործութիւնները
կատարած լինէինք անման թագաւորի համար,
որ տէրն է կենդանիների ու մեռելների։ Զէ որ,
ինչքան էլ ծերանանք, մի օր այս մարմնից պի-
տի դուրս գանք, որ գնանք կենդանի Աստծու մօտ։

Չեզանից շատերն ինձնից բարձր են թէ
արիութեամբ և թէ գահով, բայց երբ յօժարո-
կամ ինձ առաջնորդ ընտրեցիք, ինդրում եմ
ուշ գարձնէք խօսքերիս։ Զըլինի թէ վախենաք
հեթանոս պարսիկների բագմութիւնից ու նրանց
սրից երես թեքէք։ Ո՞չ, իայոյս եղէք, մենք
Տիրոջ օգնութեամբ թշնամու զօրքերին ջարդե-
լու ենք, որ հասկացնենք թէ ճշմարտութեան
կողմը բարձր է։ Իսկ եթէ մեր կեանքի ժամը
հասած կըլինի, ուրախ սրտով ընդունենք այն
սուրբ պատերազմի մէջ, քաջութեան մէջ վախ-
կոտութեան կաթիլ ըլխառնենք։

Անշուշտ միաներդ է, թէ ինչպէս խարեցինք
անօրէն իշխանին՝ իբր թէ քրիստոնէութիւնն ու-
րացել ենք և մոգական կրօնն ընդունել։ Աս-
տուած էլ գիտէր, որ այդ բանն երեսանց էինք
արել, մեր սրտերը նրա հետ էին։

Երկու երեք կոռի մէջ տէրը մեզ օգնեց,
թագաւորի զօրքերին ջարդեցինք, մոգերին անո-
ղորմ կոտորեցինք, պիղծ կաապաշտութիւնը մեր
աշխարհից մաքրեցինք։ Անօրէն թագաւորը, որ
առաջ խռոված ծովի պէս, լեռնանման ալիքնե-
րից բարձրագէղ փրփուր էր հանում կամ ամ-

պերի վրայից որոտալով ուղում էր աշխարհ գղրդացնել, վերջն այնքան նուաստացաւ, որ արժան համարեց մեզ հետ զրոյց անել և իրա մտքի չարութիւնը խօսքով առաջ տանել. Թրանով աջողութիւն չըգտնելով այժմ սկսել է նիդակով, աղեղով և սրով փորձել, թող փորձի, մենք քրիստոնէութիւնից ետ կացողը չենք: Նրա հիմք հաստատ է և զրուած անշարժ վիմի վրայ, այն էլ ոչ թէ երկրում, այլ երկնքում, ուր ոչ անձրեներ են տեղում, ոչ հողմեր շնչում: Քրիստոսի անձեռագործ շէնքին ոչ որ չի կարող հասնել, հաստատ կացէք ձեր ուխտին, ձեր նահատակութեան գործը մոռացուելու բան չէ: Յիշում էք, թէ ուրացութեան պատճառով ինչպէս էին դառնացած մեր դէմ մեր արիւնակիցները. մեր խորհրդին անտեղեալ լինելով մեզ նզովում էին իրեր ամբարիշաների: Այժմ, քաջ ընկերներ, հասել է ժամը, երբ կարող ենք այդ արատը մեզանից սրբել. Այն ժամանակ մարմնով սպաւոր էինք ու տիսուր. այժմ զուարթ դէմքով տեսնում ենք, որ Տէրը մեզ առաջնորդում է: Երկիւղը թերահաւատութեան նշան է, թերահաւատութիւնը մենք վաղուց ենք դցել, թող նրա հետ երկիւղն էլ կորչի, վերանայ մեր մըտքից ու սրտից»:

Քաջ զօրավարն այս ամենը բազմութեան հետ խօսելուց ետ մօտեցաւ իւրաքանչիւր բաժնի. առանձին քաջալերեց, պակասութիւնը լրացրեց, դէնք չունեցողին դէնք հոգաց, հանդերձ չունե-

ցողին հանդերձ. ձի չունեցողին ձի: Զինուորաներին զուարթ դէմքով երևալով նրանց սըտերը եռանգով լցրեց:

Հայոց բանակի մէջն էր նոյնպէս եկեղեցական դասը, Յովսէփ կաթողիկոսին իրանց գլուխ առած. բայց ուխտավահների հոգին, ինչպէս ասել եմ, Ղեոնդ երէցի բոան մէջն էր, իրա քաջասրտութեամբ ու բարոյական ազգեցութեամբ համարւում էր բանակի երկրորդ սպարապետը: Երբ զօրքի առաջ երեկոյեան հանդիսաւոր ժամերգութիւնը վերջացաւ, Ղեոնդ երէցը զուրս եկաւ ու ձարտար լեզուով այսպէս քարոզեց: Ղեոնդ երէցն ասեց. «Յիշեցէք, սիրելիք, պատանի Դաւթին, ինչպէս մսէ բլուր Գուղիաթին մի քարով գետին գլորեց, այլազգիների գունդը շաղ տալով, իրա ժողովուրդը գերի դառնալուց ազատեց:»

Յիշեցէք Խորայէլի առաջին զօրավարներին՝ Յեսուսին, Գէդէօնին, Յեփթային, որոնք ճշմարիտ հաւատով խփեցին, կոտորեցին հեթանոսների զօրքը, Զըթուլանանք հաւատի մէջ, մենք էլ սրտապնդուելով յարձակուենք անիրաւ թըշնամիների վրայ, որ եկել են մեր երկիրը: Մեր յոյսը կրկնակի է. եթէ մեռնենք, եկող սերնդի սրտում կապրենք, եթէ յաղթենք, կըմնանք կենդանի մեր հայրենիքի ու եկեղեցու ծոցում:»

Հեռացնենք մեզանից մոլորեալների խաւար խորհուրդները, ինչ զործ ունենք եղեղի ու ողորմելի մարդկանց հետ, որոնք յօժարտակամ կու-

լրացել են։ Մենք բաց աչքով երկնաւոր լոյսը տեսել ենք, այնտեղ վերևն է մեր փրկութեան առաջնորդը, եկաւ այստեղ քաջութեամբ նահատակուեց, նոյնը ուսուց իրա գործակից առաքեալներին։ Նրանց դասում երեալու էք այսօր և դուք։

Առաջին ժամանակները հոգեսրականներ ևս լինում էին բանակում։ Նախ քան պատերազմ սկսուելը նրանք աղօթում էին պատերազմողների համար, նրանց գլախին «Պահպանիչ» էին առում ու յետոյ հեռանում ամուր տեղում թագնըսում։ Բայց այսօր ահա տեսէք եպիսկոպոսներին, երէցներին, սարկաւագներին—նրանք հոգեւոր զէնքով վառուած՝ կամենում են ձեզ հետ միատեղ յարձակուել ճշմարտութեան թշնամիների վրայ։ Թէկուզ մահ բաժին ընկնի նրանց, դրանից երկիւղ չունեն։ Նրանց համար լաւ է մեռնելը քան թէ մեռցնելը։ Եկեղեցին հաստատուած է ս. Առաքեալների չարչարանքով և քաջմարտիրուների արիւնով։ Մինչև երկրորդ գարուար առաջինիների և ընտրեալների նահատակութիւնը պիտի շարունակուի։ Նրանց շարքում պիտի դասուէք և դուք։ Ձեզ հրաւիրողներն են ձեր Լուսաւորիչ պապերը, որ գնաք նրանց գնդերի մէջ մտնէք և ժառանգորդ դասնաք Քրիստոսից խոստացուած երկնաւոր բարիքներին։

Այսպէս յորդորեց սրբակրօն Ղեղնդը զօրականներին, որ անվեներ առաջ դիմեն նահատա-

կութեան պսակն ընդունելու։ Պատարագ անելու համար սեղան շինեցին գիշերը, քահանաները աւագան սարքեցին, ով մկրտուած չէր, մկրտեցին, մինչև լոյս բացուելը ամբողջ հայ բանակին հաղորդեցին։ Բազմութիւնը հոգով զինավառուած գոչեց։ «Թող մեր մահը հաւասարուի արդարների մահին, մեր տրիւնը սուրբ մարտիրուսների հետ խառնուի. մեր կամաւոր պատարագը Աստուած ընդունելով մեր ազգն ու եկեղեցին հեթանոսների ձեռից ազատի»։

Պարսից հրամանատար Նիւսալաւուրտը իրա ձեռի տակ ունէր 300 հազարի չափ զօրք, չորս անգամ շատ քան թէ Վարդանը, զրա համար հպարտ աշքով էր նայում հայոց բանակին։ Կոռւի ժամի արդէն մօտ էր. ժողովեց իրա զօրավարներին ու այսպէս խօսեց. «ամեն մինդ յիշեցէք մեծ թագաւորի պատուէրը. աչքներիդ տակն առէք մահը քան թէ վախկոտութեամբ ապրելը։ Միք մոռանալ այն առատ պարզեները, որ թագաւորի կողմից բաժանեցի ձեզ։ Առանց իմ ասելու փորձով գիտէք հայ աշխարհի քաջերին։ Սրիութեամբ պիտի կռուէք, որ չըյաղթուէք, թէ չէ ձեր սրբելի կանայքն ու սրդիքը ոտնատակ կըլինեն նրանցից։ Պատերազմից ետ քաջերը կը վարձատրուեն արժանապէս, իսկ փախչողները կը պատժուեն խստապէս»։

Հայերն արդէն կռուի պատրաստ էին. սպասում էին հրամանի, որ սկսեն։ Այդ պատճառով այնքան թշնամի բանակին չէին նայում, որքան

Վարմիր վրանին, որի վերև թառած էր ոսկէ արծիւը և շուրջը եռագոյն դրոշակները ծածանււմ էին: Սպառազէն սպաներ, որը հեծած, որը հետևակ, քաջ Վարդանի դուրս գալուն էին սպասում: Ահա լայնաբերան փողերը պատերազմի: Եղանակը հնչեցրին ու Վարդանը, որ այդ օրը հայոց թագաւորն էր, ոիպտակ նժոյգի վրայ նըստած փայլեց ինչպէս մի արեգակ: արծաթէ ոսկեզօծ սպառազինութեան վրայ տարածւում էր մեծ ծիրանի վերարկուն: Գլխին արծաթէ սաղաւարթ, ձեռին նիզակ և նրա վրայ եռագոյն դրոշ զանազան գոյնի ու նշանի վառեր, որոնք ցոյց էին տալիս թէ Վարդանը բացի Մամիկոնեան տէր լինելուց, ոյլի հայոց սպարապետ, յունաց ստրատելատ և հայ թագաւորի տեղակալ է: Վարդանը արշաւելով թռաւ հայ բանակի մի ծայրից մինչև միւսը: Զօրքի մի մասը զրահով էր, միւսն անզրահ, ոմանք աղեղնաւոր էին, ոմանք վահանաւոր: Հետևակ զինուորները նիզակաւոր էին ու սուսերաւոր. հեծեալներն աւելի շատ էին ու ամենն էլ զրահաւորուած: Վարդանը ողջունեց ամենին ու պատերազմի կանչեց այս խօսքերով, «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է. դէ առաջ, իմ կտրիճներ»: Սյս խրախուսով նոր հոգի լցրեց նրանց սրտերի մէջ:

Մեր պատմագիր Եղիշէն պատերազմը նկարագրում է այսպէս. «Երկու կողմն էլ անհուն բարկութեամբ, զագանացած ուժով իրար վրայ

յարձակուեցին: Երկու կողմերից խառն աղաղակներ էին բարձրանում, կասես շփոթուած ամպեր էին ճայթում, ճարճատում: Փոսում գոչիւնից լեռների քարանձաւները զբլմբում էին: Անթիւ սաղաւարթներն ու սրերի փայլուն պատեանները արեկի ճառագայթների պէս շողշողում էին, անհամար սրերի շողախն ու բաղմախուռ նիզակների ճոճալը տեսնելիս մարդ կարծում էր թէ երկնքից ահազին հրածգութիւններ են լինում: Ի՞նչ լեզու կարող է ահաւոր ձայների շփոթն ու տագնապը պատմել: Վահանների կոփուելը, աղեղների լարերի ճայթելը ականջ էին խլացնում: Երկու կողմից տնընդհատ հարուածներ էին տեղում իրար վրայ և մահաբեր սարսուռ պատճառում: Թանձրամիտները մնում էին տեղն ու տեղը շմուած, վախկոտներն աշխատում էին զլուխները մի կերպ ազատել, իսկ քաջերն անվախ ճակատով առաջ էին վագում հարուածներ հասցնելով: Դրանք ընկնելիս էլ ուրախ բացականչութեամբ մահ էին ընդունում: Տղմուտ գետը խանգարում էր իրար վրայ վազել երկար ժամանակ հեռուից նետերով ու հրածիկ զէնքերով էին կուռում: Հայերն աղեղ բանացնելու մէջ շատ վարպետ էին. Թշնամուց շատերին սպանեցին, բայց իրանք քիչ լինելով չըկարացին նրան զիրքից ետ քշել: Թըշնամին բազմաթիւ լինելուց որդունքի պէս տեղն ու տեղը դժվարում, եռ էր գալիս, բայց հայերի աղեղի հարուածներից աչք չէր թափում, որ գետն անցնի: Հայերը լեռնոտ երկրի զաւակ լի-

նելով աւելի ճարպիկ ու արագաշարժ էին, ուստի առաջինը նրանք փորձ արին, ջուրն անցան ու դիմացի պարսիկներին քշեցին։ Դրանով պատերազմն աւելի բորբոքուեց, ձախ թերեն իրար դէմ հաւասար կռուեցին։ Դովդը գօրաբաժնի դէմ սակաւաթիւ հայ զօրքն այնքան յուսահատ կռուեց, որ Խորէն, Արսէն, Ներսէն զնդապետներին կորցրեց։ Միջին թերը նոյնպէս ուժերը լարած հաւասար կռւում էին։ Աջ թերի մէջ հայը հայի դէմ էր կռւում։ Այդաեղ Վասակի ոյժը մեծացաւ և Վարդանի համախոհների թիւն սկսեց նուազել, որովհետեւ այդ խառնաշփոթ վայրկեանին մի հայկական դունդ կռուելուց հրաժարուեց։ շարքից հեռացաւ։ Այս հանգամանքը հայ պատերազմողների վրայ վատ ազդեց, Վարդանի սուր աչքը տեսաւ աջ թերի ետ քաշուելը, իսկոյն վերջապահ գնդով օգնութեան հասաւ, հաւատարիմ շարքերը նորից կարգի բերեց, ինքն առաջ անցնելով յարձակուեց պարսից աջ թերի վրայ, ուխտազանց հայերին քշելով ածեց միջին թերի ու վիղակոյտի վրայ։ Այդ գործողութեամբ իրա բանակը մեծ շփոթութիւնից ազատեց։ Այդ նոյն ժամին Արծրունի Վահանը հայ միջին գնդով զրոհ տալով ընկաւ թշնամու միջին գնդի վրայ, իրար գլխի թափելով հալածեց դէպի վեր։ Եթէ հայերը թուով պարսիկների չափ լինէին. կարող էին թշնամու բանակը ցաք ու ցրիւ անել, որովհետեւ Վարդանի ու Վահանի յարձակումից մատեան գունդն անգամ քանդուեց և իրա շարք-

րից 140 հոդի կորցրեց։ Մնացածներն ուզում էին փախչել, երբ չարանենգ Վասակի կորած գլուխն երեաց։ Վարդանը բուռն վրէժինդրութեամբ լի վրայ պլծաւ, որ անիծածին շնչահան անի, խորամանկն զգաց զլիսին գալիքը, օձի պէս սողալով մտաւ վղերի արանքը, ազատուեց։
Եղիշէի ասելով Նիւսալաւուրտը մեծ տագնասի մէջ ընկաւ Վարդանի առաջանալու վրայ։ Նա այն յուսով էր եկել, որ հայերին մորեխի պէս ջարդի, յանկարծ տեսնում է թագաւորական գունդն անգամ հայերի հերոսութիւնից փախուստի բերանում։ Իս բանակի համար մահի ու կեանքի բոպէ էր։ Գալարափողը ձեռն առաւ, շունդով ուշքի բերեց շփոթուած զօրքերին։ մատեան գնդին խրախուսեց և իսկոյն վերջապահ զօրքի մի մասը խաղացրեց դէպի ձախ կանգնած հայոց զօրաբաժինը և միւս մասին նշան արեց, որ շրջապատեն Վարդանին ու Վահանին։ Ինքը Նիւսալաւուրտը առաջ խաղաց, Արտաշէր գնդապետին էլ հրամայելով վղերին առաջ քաշել։ Կորովի Վարդան սպարապետը երեք կողմից շրջապատած պարսիկ զօրքերով, մեծ հերոսութիւն ցոյց տուեց իրա նիզակակից ընկերների հետ, թշնամիներից շատ շատերին կեանքից զըրկեց, ինըն էլ վերջը քաջաբար նահատակուեց։ Նրա հետ նահատակուեց նոյնպէս Արծրունի Վահանը։ Աջ թերի երեք գնդապետներն էլ՝ Խորէն Արսէն և Ներսէն մինչև վերջին շունչը զօրքին խրախուսելով առաջ գնացին ու կռուելով քաջի

պէս ընկան։ Զախ թեկից ընկաւ Տաճատ գնդապետը։ Միջին և ձախ թեկերից երկ երկու զօրավար կենդան մնացին։ Ընկան նոյնպէս Արտակ, Հմայեակ, Վահան և Գարեգին իշխանները։ Իրիկնաղէմն էր, երբ զօրքին ետ քաշեցին Արշաւիր ու Համազասպ իշխանները, որոնք պատերազմի եռուն տեղից հեռու էին, իբրև վերջապահ գնդի գլխաւորներ։ Ուխտապահ զօրքերից շատերը այդ իշխանների մօտ դադար չառան, այլ զանազան կողմեր ցրուելով բերդերում ամրացան։

Եղիշէի ասելով հայերի կողմից ընկան 10 իշխան և բաւականի քաջ զինուորներ։ իսկ թըշնամու կողմից պատերազմի մէջ ընկան 9 մեծ իշխաններ և բազմաթիւ զինուորներ։ Նիւսալաւուրտն սկսեց կատաղութիւնից եփ գալ. երբ տեսաւ, որ իրա զօրքի կորուստը պատերազմի մէջ եօթն անգամ աւելի է քան թէ հայերինը։ Այդ թուից երեսում է թէ հայերն ի՞նչ յուսահատութամբ են կոռւելիս եղել։

Բայց պատերազմը հայերի համար չըվերջացաւ, նրանք առանց գլխաւորի մնալով փախել էին բերդերում ամրացել. Զար Վասակը Նիւսալաւուրտին միխթարեց կըած կորստի համար ու խոստացաւ ամեն հնար գործ գնել, այստեղ, այնտեղ ամբացած աշխարհական թէ հոգեւրական հայերին ցած բերել։ Փորձեց առաջ պատգամաւորներ ուղարկել փախստական հայերի մօտ. պատգամաւորներն էին ուխտաղրուժ քա-

հանաները, որոնք Միհրներսեհից մեծամեծ պարգևների յոյս ունէին։ Դրանք եկան հայերին յայտնեցին, որ Յաղկերտի կողմից ամեն ապստամբութիւն ներուած է, բոլորը կարող են առաջուոյ պէս իրանց եկեղեցու շինութեան, պայծառութեան ետնից կենալ. Բայց Վասակի խաբեբայութեան պատճառով ոչ ոք չէր հաւատում թագաւորի հրամանին։ Նենգաւորը տեսաւ, որ երդումն ու խոստումն իրանց ուժը կորցրել են, դիմեց ուժի։ Զօրքերով բերդերը շրջապատեց, չըթողեց ուտելու պաշար մտնի, մինչեւ որ սովից ստիպուած անձնատուր լինեն։ Ամիսներով կորիւմղեց բերդերում պաշարուած զօրականների հետ։ Մի բերդի պաշարուածներ անտանելի գրութեան մէջ էին, սովամահից ազատուելու համար դուրս եկան ու Վասակի խոստման վրայ վստահացած անձնատուր եղան։ Զարանենդը նրանց կեսանքը խնայելու փոխարէն, հրամայեց 214 հոգուն էլ ըսպանել։ Յովսէփի կաթողիկոսը, Ղեոնդ երէցը և ուրիշ հոգևորականներ զրանց մէջն էին. նրանք էլ պարանոցները մեկնեցին սրին ու ասին. «Եթէ թագաւորն ազատ է թողել, դու ինչո՞ւ ես սպանում հաւատացեալներին. Եթէ նրանց սպանում ես, մեզ էլ մի խնայիր, թէ չէ բոլոր անիրաւութիւններդ թագաւորին կըպատմենք»։ Նրանց տարան Նիւսալաւուրտի մօտ. սա մանրամաս խօսեցրեց. շատ զայրացած էր հոգևորականների վրայ, իբրև ժողովրդին ապստամբեցնողների, բայց ապագայ պատասխանատութիւնից վախե-

նալով չըհամարձակուեց Յովսէփին և Ղևոնդին
սպանել, այլ ծեծել տուեց ու հրամայեց շղթա-
յակապ պահել: Միւս հոգևորականներին արձակեց:

Պարսից զօրքին իրաւունք էր տուած, ինչ
ուզենան երկրի մէջ անեն: Հայ ժողովուրդը
նրանց բռնութիւններից ազատուելու համար
թողել էր տուն, տեղ, բան ու գործ և ապաւի-
նել էր անտառներին, լեռներին: Հարս, փեսայ,
մարդ, կին, շինական թէ ազնուական—ամենը
լաւ էին համարում գազանի նման քարանձաւ-
ների մէջ աստուածապաշտութեամբ ապրել, բան
թէ ուրացութեամբ հոյակապ շէնքերի մէջ բնա-
կուել: Մի մասը Խախտեաց (Տրապիզոնի կողմ)՝
մութ երկիրն էին քաշուել, մի մասը Տմորեաց
(Վանայ ծովի հարաւ) անմատչելի տեղերը, եր-
րորդ մասը Կապոյտ լեռան բերդերը, չորրորդ
մասը Արցախի անտառները: Հոները (որ ապ-
րում էին Աստրախանի կողմերը) տեսնելով հա-
յերի յուսահատ կոխւները, գունդ կազմած ըն-
կան պարսից տէրութեան սահմանների վրայ,
շատ գաւառներ ոտնակոխ արին, որ ցոյց տան
Յազկերախն թէ իրանք հայ զօրքի հետ դաշնա-
կից են:

Այս բաներից ետ Նիւսալաւուրաը գրով տե-
ղեկութիւն տուեց թագաւորին պատերազմի մա-
սին: Յազկերաը խիստ տիրեց լսելով պարսից
այնքան զօրքի ու զիսաւորների կոտորածը—9
մեծ իշխան և 3544 զինուոր: Նոյնպէս շատ
տիրեցրեց նրան Վարդան սպարապետի մահը:

Հայ զոհերի թիւը՝ թէ պատերազմում սպանուած,
թէ փղերից կոխուած և թէ իբրև փախստա-
կան նահատակուած, ընդամենը 1036 էր: Նիւ-
սալաւուրաը բոլոր հանգամանքներն արդարու-
թեամբ նկարագրելով՝ մեղաւորութիւնը զցեց
ուրացեալ Վասակի վրայ: Այս բանը Վարազվա-
ղայի սրտովն էր, կարող էր Ղարաբաղի կառա-
վարիչ դառնալ, բայց Վասակը պարսից դռանն
ունէր իրաբարեկամներն էլ, որոնք նրան պաշտ-
պանեցին: Թագաւորը չըգիտէր՝ որ կողմն է ար-
դարը, գործը նրա համար պարզ չէր. անպատ-
ճառ ուզում էր մի մարդ գտնել, որ ճշմարտու-
թիւնն իրա առաջ բաց անի: Միհրներսեն ա-
սեց. «Ճէր, ամենից լաւն այն է, քրիստոնեայ
հայերի զիսաւորներին կանչենք ու նրանց հարց
ու փորձ անելով ստոյգն իմանանք»:

Յազկերան իրա Ատրորմիզդ նախարարին
մարզպան նշանակեց Վասակի տեղ ու հրամայեց
գնալ, հայերին ազատութիւն տալ, որ ըրիստո-
նէութիւնը համարձակ պաշտեն, իսկ նրանց գըլ-
խաւորներին ուղարկել իրա մօտ Տիզբօն:

Ատրորմիզդը եկաւ Հայաստան ու մարդիկ
սփոնելով ամեն կողմ առաջարկեց ժողովրդին, որ
թագնուած տեղերից դուրս գան, հանգիստ ի-
րանց տնտեսութեամբ պարապեն ու ըրիստո-
նէութիւնը ազատ դաւանեն: Աղքատ, խեղճ դա-
սակարգը հաւատաց ու սկսեց սովորական պա-
րապմունքը, իսկ շատերը կասկածով վերաբե-
րուելով նոր մարզպանի խօսքերին, մնացին թագ-

Նուած: Այդպիսիներին Ատրորմիզը համարեց ապստամբ և սկսեց հալածելով պատժել: Երկրի մէջ հայրենասէրների խմբեր շատ կային, որոնք տտելով տտում էին թէ ուրացեալ հայերին և թէ պարսիկներին. Նրանց մէջ Ատրորմիզը համար ամենավտանգաւորը Վարդանի եղբայր Համազապն էր: Նրա շուրջն էին հաւաքուած փախստական իշխաններն իրանց զօրքերով: Նրանք վճռել էին լուրջ դիմադրութիւն ցոյց տալ Յաղկերտի ուղարկած զօրքերին և այդ կանէին հայրենասէրները, եթէ Ատրորմիզը չօգնէին հայդաւաճանները: Համազապն անտարակոյս իրաքաջերով սարսափ կը զցէր պարսիկների վրայ, բայց աւաղ, փուչ հայ իշխանների շնորհավ ինքն ու իրա ընկերներն ընկան ծուղակի մէջ ու զիշերուայ կիսին անակնկալ ըրջապատուեցին թըշնամիներով: Համազապը ձինստեց, որ առաջնորդի, մահացու վէրք ստացաւ, ու ընկաւ: Ընկերներն այդ տեսնելով հազիւ ծուղակից ազատուեցին ու ցիր ու ցան եղած փախան:

Այդ օրուանից Հայաստանի ճակատագիրը մնաց պարսիկներին, հայ գիւղում թէ քաղաքում հրապարակի վրայ նրանք էին: Ատրորմիզը վերջը զէնք բանացնելն աւելորդ համարեց. շատ հայեր խոստումների, երդումների հաւատալով սկսել էին իջնել ամրացած տեղերից: Եկան Ներշապուհ Արծրունին, Արշաւիր Կամսարականը, Վահան Ամատունին, Ուրիշների հետ սրանց ևս կալանաւորեց Ատրորմիզը, որ ուղարկվ

Յազկերտի մօտ: Յովսէփի կաթողիկոսն ու Ղետնդերէցն արդէն շղթայակապ էին, ձերբակալեցին միւս գլխաւորներին՝ Սահակ եպիսկոպոսին, որ մի մոխրանոց էր քանդել և կրակի սպասաւորներին ծեծել, Մուշէ քահանային, որ կրակատուն աւերելով մոգերին տանջել էր, Սամուէլ, Արշէն երէցներին, Արքահամ, Քաջաջ սարկաւագներին, որոնք ատրուշան էին քանդել ու կրակը ջըի մէջ թափել: Այս ամենին ուղարկեցին Յազկերտի մօտ հասկացնելով, որ գնում են կատարուած դէպքերի մասին ստոյգ տեղեկութիւններ տալու: Վասակը երբ իմացաւ, որ այս բանը Միհրներսենի խորհրդով է, ապահով եղաւ, որ իրան վնաս չի դիպչիլ: Մեծ պատրաստութիւնով ինքն էլ ճամբար ընկաւ գէպի Տիղըն, հետը վերցնելով Մամիկոնեան, Կամսարական և ուրիշ իշխանական տներից վերցրած տղաներին, որոնք իբրև գերի սպահուում էին Սիւնեաց աշխարհի բերդերում: Յովսէփի կաթողիկոսին, եպիսկոպոսներին, քահանաներին դրել էին ջորիների վրայ և փորի տակից ոսները թոկերով ամուր կապել, այդպէս էին տանում երկար ճանապարհը: Վասակը նժոյգով էր, շուտ հասաւ բեռնակիր ջորիների քարուանին ու կեղծաւորաբար բարեւց հոգեորականներին, իբրև թէ ոչինչ չի պատահել: Ջըոյց անելով Ղետնդ երէցի հետ երևացրեց իրան՝ իբրև հայրենիքի ցաւակից: Այնքան իրան անսեղ և արդար էր զգում, որ մինչև անգամ իջնանում խնդրեց սուրբ հայրերին իրա հետ ճաշել: Կար-

ծելով թէ նրանք այնքան միամիտ են, որ իրա խորամանկութիւնը չեն հասկանում, հրաժեշտ տուեց ու ձին նստելով առաջ շարժուեց։ Ղեոնդ երէցի սիրտը չըհամբերեց, որ հայ աշխարհ կործանողը իրանց առաջ գոռոզացած գնայ. ետնից ձայն տուեց։ «Սիւնեաց տէր, Սիւնեաց տէր, կանգնիր, խօսք եմ ասում։ Վասակը ձիու բերանը շուռ տալով հարցըց. «Բնչ ես ասում, Ղեոնդ երէց»։ — «Ո՞ւր ես գնում, հարցնում եմ»։ — «Զարմանում եմ խօսքիդ վրայ, միթէ չըգիտես, որ գնում եմ վարձատրութիւնս ստանամ»։ Ղեոնդ երէցը խօսեց. «Սիւնեաց տէր, դիր քեզ դարձեալ խաբում է, ինչպէս խաբեց Աւետարանից հեռացնելով։ Դու ոչ միայն վարձատրութեան երես չես տեսնիլ, այլ եթէ շունչդ վրէդ Հայաստան դառնաս, այն ժամանակ թնդ իմ կարգը զլխիս խռով կենայ»։

Վասակն առանց պատասխան տալու ճամբէն շարունակեց, նրանցից շուտ տեղ հասաւ։ Վաղօրօք պարսից մեծամեծներին տեսաւ, յետոյ թագաւորին ներկայացաւ, իրա անձն արդարացնելու համար ամեն ինչ իրա ուզածով բացատրեց։ Հայ հոգևորականների ու իշխանների ճամբագլը երկու ամսից աւելի քաշեց։ Տիգրոն հասնելիս նրանց ընդունեց Միհրներսեհը ու կոպիտ շը վարուեց։ Յազկերտը հրամայել էր նեղութիւն չըտալ։ Ատրորմիզգը գրով յայտնել էր թագաւորին, որ գեռ շատ հայ նախարարներ շարունակում են չըլսել թաղաւորական հրամա-

նին ու բերդերն ու ամրոցներն իրանց ձեռին պահել։ Յազկերտն ստիպուած նոր հրովարտակ գրեց, որ մոգական կրօնն ընդունած քրիստոնեաները կարող են դարձեալ իրանց հաւատախն դառնալ։ Հայ նախարարները տեսան, որ այլիս բռնութիւն չըկայ, դէս գէն ցրուած ու փախած հայերը վերագառնում են, աղատ կերպով իրանց տուն ու տեղին տիրանում, իրանք էլ Ատրորմիզգի մօտ մարդ ուղարկեցին, յայտնեցին, որ ցանկանում են յօժարակամ պարսից դուռը զընալ, պատահած անցքերի մասին կարևոր ցուցմունքներ տալ. Երբ Յազկերտին այդ մասին տեղեկացրին, կարգադրեց թոյլ տալ հայ նախարարներին, առանց կապանքի գալ, իրան Տիգրօնում ներկայանալ։ Եւ եկան։

Միհրներսեհն ցանկացաւ նախօրօք հայ հոգևորականներին հարց ու փորձի ենթարկել. ատեան կազմեց, հարցըց. «Ինչու կրակ Աստծուն հանցըրել էք ու սպանել»։ Հոգեորականները պատասխանեցին. «Չար լեզուները ձեզ սիալեցը բել են. մենք չենք սպանել, այլ որովհետեւ ձեր կրօնի ասելով ջուրը կրակի եղբայրն է, մենք կրակն առել ենք եղբօր գիրկը գցել, որ միրով պահպանի»։ — «Ահ, խորամանկներ, դեռ համարձակւում էք ծաղրել մեր կրօնը», որոտաց հազարապետը ու բոլորին սպանական կերպով հարցըց. «Բնչպէս յանդրգնեցիք կրակատները կործանել, մոգերին սպանել»։ Ղեոնդ երեցը ամենի փոխարէն պատասխանեց երկար ու խօսքը

վերջացրեց այսպէս. «ամեն նիւթի մէջ էլ կրակ կայ, ուրեմն միթէ երկրիս բոլոր նիւթերն էլ աստուածներ են, Եթէ զուրն աստուած է, ինչու նրանով աղք ու կեղտ էք լուսնում: Վարդանն ու իրա ընկերները բողոքում էին, որ ձեր պաշտամունքը սուտ է, անմիտ մարդի խելքի բան է, նոյնը կրկնում ենք և մենք իբրև նրանց վարդապետներ»: Միհրներսեհը և մեծամեծները զայրացան Ղեռնդի վրայ և Յովսէփին, Սահակին, Արշէնին ու միւս հոգևորականներին հարցըն. «մեր օրէնքը չի թոյլատրում մէկին պատժել, ասացէք, արդեօք դուք էլ այս մահապարտի կարծիքն էք»: — «Այս, ինչ որ դա խօսեց, նոյնը մեր համոզմունքն է, վաղուց դրա վրայ հաստատ կանգնած ենք, ինչպէս ուզում էք, մեր կեանքին վերջ տուէք», ասին ո. Յովսէփը և ո. Սահակը: Հազարապետը հայ հոգևորականներին դատապարտեց մահուան, որովհետև նրանք խոստովանեցին, որ կրակատներ են կործանել և կրակը ջրի մէջ թափել: Կրակը հանգնելով նըշանակում է պարսից աստծուն սպանել էին: Դրա համար Միհրներսեհը հրաման արեց դահիճներին, որ երկաթէ շղթաներով ծեծեն որբերի համարձակ բերանները: Դահիճները հրամանն այնպէս խիստ կատարեցին, որ սրբերի բերանն արիւնով լցուեց:

Գլխաւոր մեծ ատեանը կազմուեց միւս առաւոր թագաւորի ներկայութեամբ: Յազկերաը հարցըց հայ նախարարներին. «Ի՞նչու էիր իշ-

խանութեան դէմ ապստամբում, պատճառն ասէք, տեսնեմ»: Նախարարները չուզեցին խառն, անկարգ պատասխանել, իրանց միջից ջոկեցին Արշաւիր Կամսարականին: Սա աներկիւդ առաջ կանգնեց ու պատերազմ առաջացնելու հանգամանքները միառմի պատմեց, իրա ասածները հաստատելու համար վկաների անուն առւեց հայերից ու պարսիկներից: Այդ վկաներն առաջ եկան ու բոլոր մեղաւորութիւնը գցեցին Վասակի վրայ: Մատնացոյց արին նամակների վրայ, որոնք Վասակի կնիքով վաւերացրած ուղարկուած էին վրացոց, աղուանից և այլ աշխարհներ, նոյնպէս յունաց կայսրին, Անտիօքի մեծ սպարապետին, որ օգնութիւն տան պարսից դէմ: Այս փաստաթղթերը ներկայացնելու համար պէտք եղաւ հարց ու փորձը շաբաթներով ձգձգել: Բայց վերջում Յազկերուի համար պարզուեց ամբողջ ճշմարտութիւնը, երբ Վասակի գաղտնի դաւաճանութիւնները բացուեցին: Թագաւորը տեսաւ, որ Վասակն ոկզբում համամիտ է եղել Վարդանին, միայն հանգամանքների բերմամբ ետ է կանգնել ապստամբութեան մասնակցելուց: Յազկերաը հրամայեց Վասակին ատեանի առաջ կանչել, Վասակն եկաւ: Թագաւորը բոլոր փաստերը նրա երեսին բռնելուց ետ, ինչ որ սրտում զայրոյթ ունէր, թափեց վրէն գոռալով. «Անիրաւ, կործանեցիր Վարդանի պէս հերոսին, նրա պէս վաստակաւորին, որին յունաց կայսրը ու հոնաց թագաւորը ուժով կամենում էին ինձնից խլել —

Ես բոլոր արիական զօրութեամբ կուռում էի և
հանգիստ չունէի մինչև իմ կողմը քաշեցի։ Այս-
պիսի մեծ պատերազմի սկզբնապահառ դառնա-
լով կործանեցիր թէ Հայաստանը և թէ իմ գան-
ձարանը։ Քեզպէս նենդամիտ դաւաճանը արժա-
նի չէ իմ շնորհը վայելելու։ Է՛յ, ձայն տուեց
դահճապետին, վերցրու սրա պատուանշանները։
Վասակը որ միտք ունէր Հայաստանի թագաւոր
դառնալու, պապանձուեց, մի խօսք անդամ չը
կարաց արտասանել իրան արդարացնելու հա-
մար։ Դահճապետը մօտ եկաւ, նրա գլխից վերց-
րեց չալման ու վրայի ոսկէ թագը, մէջքից մար-
գարտաշար, ականակուռ գոտին, վղից ոսկէ շա-
րոցը, ականջներից ոսկէ գինդերը, ուսերից սա-
մոյր վերարկուն, ոտերից կարմիր կոշիկները։
Դրանից ետ գլխին մահուսն վճիռ կարդացին ու
մահապարտի շորեր հագցըին։ Կապեցին ոտն ու
ձեռը ու անպատիւ կնկայ նման էդ ձիու վրայ
նստեցնելով տարան զցեցին բանտը։ Թագաւորը
կարգադրեց Վասակից պահանջել պետական գան-
ձարանին դիպած մնաները։ Ինչ ունէր, չունէր,
վեր գրեցին, սակայն պարտքերը չըծածկուեցին։
Որա համար ամեն օր գուրս էին բերում բերդի
հրապարակը և զինուորների առաջ անարդում,
խայտառակում։ Նա այնպէս ծայրահեղ աղքա-
տութեան մէջ ընկաւ, որ ծառաներն էին գնում
գոնէ գուռ հաց մուրում ու բերում նրան կե-
րակում բերդում։ Այդ բանը պատահեց 453 թ.։
Անձնուէր հոգկորականներին և հայ նախա-

բարներին իրաւունք չըտուին, որ վերադառնան-
իրանց աշխարհը։ Յազկերտի հրամանով նրանց
բանդարկեցին Վրկան աշխարհում, որ պարսից
զօրքի ամարանոցն էր, և ուր այժմ թեհրանն է
դանւում,

454 թուին, այսինքն Յազկերտի թագաւորու-
թեան ժգ. տարում յունաց կայսրն ու իրա աշխար-
հը գողում էին նրանից, նրա դէմ գլուխ բարձրաց-
նողները դարձեալ կաբուլի կողմի քուշանները
եղան, զրա համար մեծ զօրք ժողովեց Յազկերտը,
գնաց նրանց վրայ։ Նրա հրամանով հայ կապեալ
հոգկորականներին ու նախարարներին ևս տա-
րան զօրքի հետ։ Վրկան աշխարհից վերցըին
տարան Ապար աշխարհի Նիւշապուն քաղաքի-
բանդը։ Քուշանաց թագաւորը Յազկերտի մտա-
գրութիւնն իմանալով՝ իրա ձիաւոր զօրքերը մաս-
մաս բաժանեց, անակնկալ յարձակումներ արեց
Յազկերտի զօրամասերի վրայ ջոկ ջոկ։ Քուշան-
ները յանկարծակի խփում, ջարդում էին ու ան-
երևոյթ լինում։ Այս ձեի կրիւը մեծ վնաս հասց-
րեց պարսից կանոնաւոր զօրքին։ գոռող Յազ-
կերտը իրան զգաց խայտառակուած, տիսուր
մատածմունքները նրան պաշարեցին։ Հարկաւոր
էր նրան տարտամ վիճակից հանել, զրա ճարը-
գիտէր աղուէս Միհներսեհը, որի խորհրդով
մոգպեսն ու մոգերը ներկայացան թագաւորին
ու ասին. «արքայ, ըո բոլոր անաջողութեանց
պատճառը աստուածների բարկութիւնն է։ Նը-
րանք դժգոհ են, որ դու տատուածասպան հայ

հոգեսրականներին մինչև հիմի առանց պատռւհասելու ես թողում: Եթէ ուզում ես գործերդյաջող գնան, նրանց տանջելով մեռցրուա:

Թագաւորը լսեց նրանց ասածին, հրամայեց ամենից առաջ Սամուէլ և Աբրահամ քահանաներին տանել մի ծածուկ տեղ սպանել: Նրանց յանցանքն այս էր, որ համարձակուել էին կրակը ջրի մէջ թափելով հանգնել: Այդ յանդկնութեան համար հրամայուեց՝ նախքան գլխատելը, սուրբ Սամուէլի աջ ձեռը կարել և դնել Աբրահամի ձախ ձեռի մէջ, յետոյ Աբրահամի աջ ձեռը կտրել ու դնել Սամուէլի ձախ ձեռի մէջ: Այդ հրամանի համաձայն նահատակեցին: Երկրորդ հրամանը թաթիկ եպիսկոպոսի համար էր, որ համարձակուել էր եկեղեցու կողքին շինած ատրուշանը կործանել: Նրան Ասորեստանի բանտում էին պահում: հանեցին, մի քանի ժամ շարունակ սկսան տանջել սրբազն հօրը, մարմինը քերեցին, պլոկեցին, մարմնից ոսկորներ հանեցին, յետոյ գլուխը կտրեցին:

Միւս հոգեսրականների վրայ նշանակել էին մի շատ գիտուն մոգպետ, որ հինգ հաւատի վարդապետութիւն հիմնովին գիտէր, նրան պատուիրել էին, որ ամեն օր քարոզի հայ հոգեսրականներին ու համոզելով մողական կրօնին բերի: Սա նրանց գցել էր մի մութ ու թաց ներքնատուն: իւրաքանչիւրին մի կտոր գարի հաց էր տալիս, մի քիչ էլ ջուր: 40 օր այսպէս պահեց, նրանք ոչ հաւատի մէջ թուլացան և ոչ մի աըր-

տունջ ցոյց տուին: Կարծեց թէ ծածուկ նրանց կերակբող կայ, գուռ ու լուսամուտ իրա ձեռով կնքեց ու աշք պահեց: Տեսաւ, որ նրանք շարունակ աղօթում են: Պահապանները միջնորդեցին, որ կարեկցի կապեալներին: Մոգպետն ինքն էլ խղճահարուելով պատռէր տուեց պահապաններին, որ թաց ներքնատնից նրանց փոխեն ցամաք վերնատունը: Ինքը քարոզելը թողեց, ականջ էր գնում Յովսէփի ու Ղեոնդի գրոյցներին. ապշած մնաց նրանց համբերութեան ու վեհ մտքերի վրայ: Նրա սրտում մի փոփոխութիւն կատարուեց, իրան ծանօթ բոլոր հաւատները պակասաւոր գտնելով թողեց մի կողմ, ընդունեց հայ հոգեսրականների դաւանած քրիստոնէութիւնը: Երբ առաւօտեան դահիճները ներս մըտան, որ հայ քահանաներին տանեն տանջելու, յանկարծ տեսան մոգպետին կապեալների մէջ նստած՝ հետները սիրով խօսելիս, քաջալերելիս, որ մահից չըվախենան:

Դենշապուհին էր յանձնած հայ հոգեսրականներին չարչարելը, այդ որ իմացաւ՝ իսկոյն թագաւորին այսպէս գըեց. «Ի՞նչպէս վարուեմ մոգպետի հետ, սա հայ հոգեսրականներին զրադաշտական կրօնին դարձնելու փոխարէն, ինքն է նրանց հաւատն ընդունելու: Թագաւորը հրամայեց, որովհետեւ իրա վարմունքով վկասակար պաշտօնեայ է պետական գործի մէջ, ուղարկիր Մակուրանի կողմերը, որ մեր ամենանեռու և սարսափելի աքսորատեղին է, թող այնտեղ մի

վիրապի մէջ մնալով մեռնի»։ Դենշապուհն այդպէս էլ արեց, Յետոյ հայ հոգևորականներին ուզեց բաժանել նախարարներից։ Նրա միտքն էր՝ այնպէս հեռացնել, որ չիմանան թէ ուր են տանում կամ ինչի՞ են տանում։ Դարբիններն իրանց գործիքներով ներս եկան. խարտելով կտրեցին երկաթէ կապերը և հանեցին սրբերի բազուկներից, ոտներից, վզներից։ Ինչ որ խարտոցով անկարելի էր, կուաններով էին ջարդում սալերի վրայ և գուրս քաշում։ Շղթաները շատ ծանր էին և յատկապէս հայ մահապարտների համար շինել տուած։ Յովսէփի շղթան իբրև կաթողիկոսի, աւելի հաստ էր ու աւելի ծանր։ Խարտոցով, կտրոցով շղթաները. հաստ բևեռները հանելիս սաստիկ վիրաւորում ու պլոկում էին նրանց մարմինները։ Սուրբ հայրերին գուրս տանելիս հայ նախարարները գուշակեցին թէ ուր են տանում. ընկան նրանց ոտները, համբուրեցին։ Վախկոտների պէս չէին արտաստում, այլ ուրախութեամբ ասում էին. «Ճեր ուրախութեան մէջ մեզ չըմուանաք, պաշտելի հայրեր, մեզ յիշեցէք»։ Նրանց տարան քաղաքից գուրս մի անապատ տեղ։ Դենշապուհի հետ երկու ուրիշ իշխաններ էլ նստան։ Դահիճները կապեցին հոգևորականների ոտն ու ձեռը ու թոկ գցելով ոտներից, երկ երկու լծուած սկսան քարերի միջով քաշքշել։ Արիւնաթաթախ մարմնով կանգնացրին ու հարց ու փորձի ենթարկեցին, «ինչու կըակը ջրի մէջ էք թափել, ինչու ատրուշաններն աւերել

էք և ժողովրդին ապստամբեցրել թագաւորի դէմ։ Ինչքան էլ չարաչար տանջում էին, հայ հոգևորականները ոչ ախ ու վախ էին անում և ոչ հաւատի մէջ թուլութեան նշան ցոյց տալիս։ Այս բանը շատ էր կատաղեցնում Դենշապուհին։ Հոգևորականները մէկը միւսից համարձակ պատասխաններ. էին տալիս. ուստի դահիճները իշխանների հրամանով մէկ Սահակի գլուխն էին կտրում, մէկ Արշէնի, մէկ Մուշէնի, մէկ միւսների։ Երբ հերթը հասաւ Ղեռնդին, սա դարձաւ Յովսէփին և ասեց. «Վեհափառ տէր, սրին մօտենալու առաջին պատիւը քեզ կըպատկանի, դու աստիճանով ինձանից բարձր ես»։ Յովսէփի կաթողիկոսը գլուխը մեկնեց, սրով վիզը կտրեցին, մնաց միայն Ղեռնդ երէցը. սրան աւելի մեծ չարչարանքի արժանացրին, որովհետև իրա գործունէութեամբ մեծագոյն յանցաւորն էր համարւում։ Նրան մերկացրին ու թոկ կապելով քաշ տուին բարքարոտ տեղերով, այնքան երկար քաշքաշեցին սուրբին, որ կրծքի ու թիկունքի մսերը մորթունետ պոկուեցին։ Այսպէս չարաչար տանջանքներ տալուց ետ գլուխը կտրեցին։ Թէպէտ Դենշապուհն ամեն կերպ աշխատել էր, որ նրանց նահատակութիւնը քրիստոնէի աչք չըտեսնի, բայց Խուժիկ վաճառականը, որ ծածուկ քրիստոնէայ էր, դահիճներին կաշառելով ներկայ եղաւ նրանց տանջանքին, յետոյ սուրբ հայրերի նշխարները ժողովեց, մաքրեց ոսկորները, հասցրեց քրիստո-

նեաներին. նրանք էլ շտապով ուղարկեցին զանագան տեղեր:

Բանտում մնացող նախարարները՝ աւագ թէ կրտսեր, 35 հոգի էին, նրանք յօժարակամ յանձն առան ամեն տեսակ զրկանք ու կապանք և համբերեցին: Իրանք փափուկ ապրած, ձիւնապատ լեռների բնակիչներ էին, դարձան խորշականար դաշտերի բնակիչներ: Էրէի նման ազատ շնչել էին ծաղկաբեր լեռների վրայ, այժմ կապկապուած ձեռ ու ոտով ընկան բոցակեզ արևելեան աշխարհ: Հացի ու ջրի կարօտ, խաւար տեղն արգելուած, առանց վերարկուի, առանց անկողնի մնացին վայրի գաղանների պէս գետնախրշտիների մէջ 9 տարի ու 6 ամիս: Առանց աըրտունջի այս ամեն նեղութիւններին համբերեցին մինչև 464 թ.: Թէ Յազկերտի մահից ետ նրանք ի՞նչպէս ազատուեցին, այդ կըսինի ուրիշ զրոյցի նիւթ: Կուզէք իմանալ թէ Վասակի վերջն ի՞նչպէս եղաւ:

Բանդում մի քանի տարի մնաց. այնտեղ ծանր ցաւերի տիրացաւ, այնպիսի վատ հոտ էր փըշում նրա մարմնից, որ հաւատարիմ ծառաներն անգամ թողին, փախան: Շատ զղաց, շատ փոշմանեց իրա արածների վրայ, բայց ուշ էր: Բանտից արձակեցին, բայց իրաւունք չըտուին Պարսկաստանից հեռանալ մինչև պարտքերը չըփարէր: Պատուի ու փառքի հետ նրա ձեռից դուրս էին եկել բոլոր կալուածները, ոչ ոք չէր ուզում նրան ճանաչել, ամենն էլ արհամարհում էին: Այս-

պիսի թշուառ ու ողորմելի վիճակում շունչը փչեց Վասակը: Իսկ Եղիշէի ասելով՝ շան պէս սատկեց և էշի նման քաշքուեց: Վարազվաղան նրա տեղ նշանակուեց Սիւնեաց աշխարհի կառավարիչ, բայց նա էլ խայտառակ վերջ ունեցաւ:

Որովհետեւ ձեր մէջ կանայք ու աղջկէք էլ կան, մի երկու կտոր էլ յիշեմ այն գովասանքից, որ պատմագիր Եղիշէն անում է Հինգերորդ դարի կանանց հայրենասիրութեան մասին: Կապեալ հայ նախարարների առաքինի կանայքն իրանց կրած վշտերով, նեղութիւններով արժանի են ամեն հիացմունքի: Եղիշէն այսպէս է զրում. «Ամեն մինը ձեռնասուն սպասաւորներ ունէր, բայց այդ դառն օրերին չէր նկատւում, թէ որն է տիկինը և որը նաժիշտը: Միատեսակ հագնուած, միասին գետնախշոու մէջ պարկում էին: Մէկը միւսի ձեռին ջուր չէր ածում և ոչ կրտսերն աւագին երեսըրբիչ տալիս: Սապոն չըդիպաւ փափկասուն կանանց ձեռներին: Ամեն բան մոռացան օտարութեան մէջ կապեալ ամուսինների սիրու համար:

Փողի ու ծուխ նստեցին նորահարսների սրահակների վրայ, սարդի ոստայնով լցուան նըրանց առագաստների անկիւնները: Կործանուեցին բարձրագահ տաճարներն ու ապարանքները, ապաստանի ամրոցները: Զորացան նրանց ծաղկոցներն ու բուրաստանները: Իրանց աշքով տեսան կալուածների յափշտակութիւնը, ականջով լսեցին, սիրելիների վիշտն ու չարչարանքը. ի-

իրանց գանձերը թագաւորական զրուեցին, իրանց երեսների զարդերն անգամ կողոպտուեցին:

Հայ աշխարհի փափկասուն աիկինները, որ ընտելացած էին բաստեռունների ու գահաւորակների վրայ հանգստանալու, բոբիկ էին գնում աղօթատուն, անձանձիր իրար խրախուսելով, որ այս մեծ նեղութեանը մինչև վերջ համբերեն: Նրանք, որ մանկութիւնից դուարակների ու էրէնների մսով էին կերակրուած, այժմ վայրենու պէս խոտաճարակ կեանք էին վարում: Թխացան նրանց մարմնի մորթերը, որովհետեւ ցերեկն արևի տակ էին կիզլում, գիշերները գետնին քաշ գալիս: Իրանց կեանքով նմանուեցին քաջ նահատակներին. հեռուից միիթարիչ վարդապետներ դարձան բանտարկուած ամուսինների համար: Իրանց մատների վաստակով կերակրում էին, իսկ գանձարանից ստացած օրական հասոյթը տարէց տարի առնում, ուղարկում էին իրանց կապեալ ամուսիններին: Անարիւն ճպուռների նման առանց կերակրի ապրում էին քաղցր երգասացութեամբ:

Բազմ աթիւ ձմեռների ձիւն ու սառուցներ հալուեցին, գարուններ եկան, ծիծեռնակներ ճռուողեցին, կենցաղասէր մարդիկ տեսան այդ բաներն ու խնդացին, իսկ հայ կանայք չըկարացին տեսնել իրանց անձակալիններին: Հեռուից եկողներին սովորաբար չէին հարցնում թէ՝ Էրբ են գալու մեր սիրելինները, այլ առ Աստուած նրանք այն էին աղօթում, որ ինչպէս սկսել են

ձշմարիտ հաւատի պայքարը, այն քաջութեամբ էլ մինչև վերջը տանեն»:

Վերջացնում եմ զրոյցս: Ճիշտ է, Վարդանանց ու Ղերադեանց սկսած պատերազմը հայերիս համար անաջող վերջացաւ, բայց այդ սըրբազմն դէպքը ցոյց տուեց, որ հայ մարդկանց մէջ էլ հերոսութեան հոգի կայ: Պատմեցի թէ ինչպէս ներսից բաժան բաժան էին եղած, դըրսից էլ ոչ մի օգնութիւն չեկաւ, բայց հայ հոգնորականն ու աշխարհականը անվախ դուրս եկան պարսից հւկայ գորութեան դէմ կոռւելու, անիրաւ արարքի դէմ բողոքելու: Մեր պապերը, ուղիղ է, կոպիտ ուժի առաջ մալմնով ճխլուեցին, բայց հոգով յաղթեցին խաւարամիտ Յազկերտին ու նրա արքանեակներին: Այժմ էլ մեր քաջ նախնիք կենդանի են մեր սրտում: Նրանց օրինակը մեծ բարոյական նշանակութիւն ունեցաւ ազգի համար, զարէց դար վառ պահեց հայի մէջ քրիստոնէութեան, հայենասիրութեան կըրակը: Այդ սնհանդչելի կըակի չնորքն է, որ մենք մինչև օրս հայ-քրիստոնեայ ենք մնացել: Փառք ու պարձանք սուրբ պատերազմում ընկած մեր պապերին: հազար բերան ողորմի նրանց, օրնեալ լինի նրանց յիշատակը:

— Ամէն, տէր հայր, մատաղ լինենք նրանց շիրմին ու յիշատակին, ոգկորուած գոչեցին ունկնդիրները:

— Մեր ս. եկեղեցին, շարունակեց խօսքը եւ էմը, իրա անձնուէր որդիներին սրբերի շարքն

է դասել և տօնում է նրանց յիշատակը ամենայն
տարի։ Դեռնդեանց տօնը Բարիկենդանի երեք-
շաբթի օրն է, իսկ Վարդանանցը Բարիկենդանի
հինգաբթի օրը։ Այդ դէպքը ոտանաւորով շատ
սիրուն դուրս են բերել մեր բանաստեղծներից՝
Վենետիկի հայր Դեռնդ Ալիշանը և Նոր Նախի-
ջևանցի Գամառ Քաթիպան (Մափալէլ Պատկա-
նեանց) Վարդան Մամիկոնեանի մահը վերնա-
զրով։ Զեղանից ով կարդալ ուզում է, ուրախու-
թեամբ գիրքը կըտամ։ Դրանից են հանած «Հի-
մի Էլ լուենք», «Լոեց ամպերը», «Ո՞վ դու բարե-
կամ» երգերը. կարելի է լսած լինէք։ Ես վեր-
ջացրի զրոյցս. յիշատակը մեր պանծալի նախ-
նեաց օրհնեալ եղիցի։

— Եղիցի, տէր հայր ջան. նրանց լուսա-
թաթախ օրհնութիւնը լինի մեր վրայ, մեր որդ-
կերանց վրայ, որ նրանց օրինակը սիրենք ու
պաշտենք։

— Դէ, երբ այդպէս հաւատարիմ զաւակներ
էք, օրհնեալ եղերուք, ասեց տէր Միթթարը ու
օդայից դուրս եկաւ։



ԲԼՅՈՒԼՆ ԱԿԱՐԱՑՐԻ

Ո՞վ դու բարեկամ այրած որտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ բլբուլիկ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջն չայոց երգէ հոգոյս հետ։
Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,

Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ' թունտ առաւ,
Ի խաչին թեէն թուայ ու հասայ,
Դտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ։
Բլբուլ քեզ համար մեր հարքն ասացին,

Թէ չէ հաւ՝ բլբուլ մեր Աւարայրին,

Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,

Որ գկարդան ի վարդ տեսնու կարմրիկ։

Զմեռն յանապատ կու գնայ կայ ի լաց,
Յարտազ գայ գարունն ի թուփ վարդենեաց,

Երգել ու կանչել յԵղիշէի ձայն,

Թէ պատասխանիկ մ' արդեօք տայ Վարդան։

Դ. Ալիշան



ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի Էլ լուենք, եղբայրք, հիմի Էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է գրել,
Իր օրհասական սուրը մեր կրծին,
Ականջ չի դնում մեր լաց ու կոծին.
Ասացէք եղբայրք Հայեր, ինչ անենք,

Հիմի Էլ լուենք։

Հիմի Էլ լուենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռողութեամբ լցրած իր հոգին,

Արդարութեան ձայնը հանած իր սրտից
Արտաքսում է մեղ մեր բնիկ երկրից,
Պանդրւխտ, հալածեալ, եղբայրք մւր դիմենք,
Հիմի էլ լոենք:

Հիմի էլ լոենք, մարդիկ ինչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Զեն ասիլ, որ Հայք արժանի էին,
Այդ ստրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև երբ լոենք:

Թող լոէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցը է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ,
Դոնէ մեր փառքը մահով յետ խլենք.

Ու այնպէս լոենք:
Գամառ-Բաթիուա

* *

Լ Ռ Ե Յ

Լըոեց: Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խըլեցին.
Մընացի մենակ՝ հոգիս վըրդոված,
Զեռներըս ծոցիս, զլուխս քաջ արած:
Եւ այնուհետեւ ամեն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա ալխրամած դէմքին նայելիս՝
Ցիշում եմ թըշուառ վիճակը ազգիս:

ԱՇի, ցոլա, փայլէ տըխրագէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և հային.
Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ՝ ինչպէս կորաւ հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրում սիրում էր Վարդան
Մայրենի հոգածաշնաբդ Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱԲԱԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՐԱԳԱՎԱՐԱՆ

7/11 1922

ԱՂՋԱՋԱ, ԽԱՆՐԱՐԱ

Մեր աշխատութեամբ տպագրութեան համար
պատրաստ են

1. Աշակերտի լիշտակարանը. Էդ. Ամիչյան, պատկերազմականը. թարգմ. զերմ.
2. Էմ. Կանտի կենսագրութիւնը, քաղուած գերմ. աղբիւներից. պատանիների համար.
3. Թէսլոր Ֆէխներն իբրև մտածող և բարոյախօս. հասակաւորների համար:
4. Ինչ է կրօնը, ուսումնասիրութիւն:

Աշխատանքների համար կազմած

«Կրօնի դասագրքները»

լոյս կը տեսնեն Էկտոգհետէ:

ՀԵԿՈՆԴ



ԵՐԵ

5762

0004815

120 13

ՀՀ Ազգային գրադարան



NL0001815

